Azg Ազգ

20 ՆՈՅԵՄԲԵՐ 2012 ԵՐԵՔՇԱԲԹԻ 206(5058)

ISSN: 1829-1651

Ինչ է ասել ԱՄՆ պետդեպը եւ ինչ են հասկացել ադրբեջանցիները

ՎԱՀԱՆ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Ադրբեջանի բոլոր լրատվական գործակալությունները երեկ հաղորդագրություն են տարածել մի ընդհանուր, այն է՝ իլհամալիեւյան աշխատակազմի կողմից «նշանակված» խորագրի ներքո՝ «Լեռնային Ղարաբաղում ԱՄՆ քաղաքացիների համար հյուպատոսական ծառայությունները հասանելի չեն»: Հենց այդպե՞ս է Միացյալ Նահանգների արտաքին քաղաքական գերատեսչությունը սահմանել սեփական քաղաքացիներին հղված ասելիքը, թե՞ ոչ, տվյալ իրավիճակում կարեւոր չէ:

Մեզ համար առավել էական են ԱՄՆ պետդեպի «ուղերձի» դիվանագիտական ձեւակերպումները: Ի մասնավորի, «ուղերձում» ասվում է. «Շընդհատվող ռազմական գործողությունները Լեռնային Ղարաբաղում անհասանելի են դարձնում ԱՄՆ քաղաքացիների համար հյուպատոսական ծառայությունները»: Այդ մասին տեղեկագրում է 1news.az-ը:

Ըստ երեւույթին, Միացյալ Նահանգների պետդեպը Լեռնային Ղարաբաղը շփոթել է Սիրիայի կամ այլ երկրի հետ, որտեղ, ոչ առանց Վաշինգտոնի օժանդակության, իրոք շարունակվում են ռազմական գործողությունները: Կամ, թերեւս, ադրբեջանական լրատվամիջոցն է իր համար ցանկալին ներկայացրել իրականության տեղ: Ամեն դեպքում, որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ, Միացյալ Նահանգները պետք է քաջատեղյակ լինի, որ ղարաբաղա-ադրբեջանական զինված հակամարտության գոտում 1994թ. մայիսից ի վեր գործում է զինադադարի ռեժիմ, որի մասին համաձայնությունը ձեռք է բերվել Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջեւ նախ Բիշքեկում, ապա՝ Մոսկվայում:

Տես էջ 2

Նոյեմբերի վերջին շաբաթը համանախագահները կայցելեն տարածաշրջան

Նոյեմբերի վերջին շաբաթը կմեկնարկի տարածաշրջան ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Ռոբերտ Բրադկեի, Իգոր Պոպովի եւ Ժակ Ֆորի այցելությամբ, ինչպես տեղեկացրել էր համանախագահների վերջին հայտարարությունը:

Հիշեցնենք, որ նոյեմբերի 8-ին համանախագահները Վիեննայում իրենց տարեկան զեկույցն էին ներկայացրել ԵԱՀԿ Մշտական խորհրդին: Հայտարարությամբ տեղեկացվում էր, որ համանախագահները մինչեւ Դուբլինում դեկտեմբերին կայանալիք ԵԱՀԿ նախարարական հանդիպումը քննարկել են լարվածության պահերը կառավարելու, նաեւ բռնությունների դեպքում իրավիճակի վաղաբարացումից խուսափելու հարցերում իրենց դերակատարությունը:

«ԱՊԱ» գործակալության տեղեկացմամբ՝ նոյեմբերի 26-ին համանախագահները կլինեն Բաքվում, կհանդիպեն Ադրբեջանի նախագահի եւ արտգործնախարարի հետ, ապա կլինեն Երեւանում, իսկ բարենպաստ եղանակի դեպքում՝ նաեւ Լեռնային Ղարաբաղում:

Վ. Պ.

Երուսաղեմի հայոց պատրիարքի ընտրությունները՝ հունվարին

Երուսաղեմի հայոց պատրիարքի ընտրությունները կանցկացվեն հունվարի 23-ին, 24-ին եւ 25-ին: Պատիարքի ընտրությունը կատարվում է ժողովի միջոցով, որի ժամանակ գաղտնի քվեարկություն է անցկացվում եւ առանձնացվում են 5 թեկնածուներ: Երկրորդ քվեարկությամբ 5 թեկնածուներից մեկն ընտրվում է պատրիարք:

Հիշեցնենք, որ հոկտեմբերի 12-ին երկարատեւ հիվանդությունից հետո կյանքի 93-րդ տարում վախճանվեց Երուսաղեմի հայոց պատրիարքը: Մ. Նահանգների արեւելյան թեմի առաջնորդի պաշտոնում 24 տարի ծառայելուց հետո Թորգոմ արքեպիսկոպոսը 1990 թ. մարտի 22-ին ընտրվեց Երուսաղեմի 96-րդ պատրիարք: 1994 թ. օգոստոսի 19-ին Վազգեն Ա կաթողիկոսի մահից հետո նշանակվեց կաթողիկոսական տեղապահ, մինչեւ Գարեգին Ա կաթողիկոսի գահակալումը Մայր աթոռին: Թորգոմ պատրիարքը 20 մենագրության հեղինակ է, որոնց թվում են բանաստեղծական երեք ժողովածու, հայկական սուրբ պատարագի ուսումնասիրություն, Կոմիտասի երաժշտությանը նվիրված մենագրություն, Հայոց ցեղասպանությանը նվիրված գրքեր եւ Երուսաղեմի սուրբ վայրերի մանրամասն ուղեցույց:

Հ. Հ.

Ավելի քան 1 միլիոն 400 հազար եվրոյի նվիրատվության խոստում

Նոյեմբերի 15-ից 18-ը Ֆրանսիայում տեղի ունեցավ «Հայաստան» համահայկական հիմնադրամի 13-րդ դրամահավաք հեռախոսամարաթոնը, գրանցվեց ավելի քան 1 միլիոն 400 հազար եվրոյի խոստում:

Այս տարվա նվիրատվությունները 8 տոկոսով գերազանցում են 2011-ի հեռախոսամարաթոնին հանգանակված գումարը:

Թուրքիան 3-րդն է կեղծված ապրանքների թողարկմամբ

Ապրանքների կեղծումը համաշխարհային տնտեսությանը տարեկան 200-300 մլրդ դոլարի վնաս է հասցնում

Եվրոմիության մաքսային հսկողության տարածքում Թուրքիայի արտադրության կեղծ ապրանքները իրենց տարածվածությամբ, գումարային առումով 3-րդն են՝ Չինաստանի եւ Հոնկոնգի կեղծ ապրանքներից հետո: Այդ մասին ԵՄ զեկույցում հրապարակված ցուցանիշները լրագրողներին ներկայացրել է Հայաստանի տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի հրավերով լրագրողների համար անցկացված սեմինարի բանախոս, Գերմանիայի Համբուրգի երկրամասի շրջանային դատարանի նախագահող դատավոր Մարկուս Շնայդերը:

Կեղծված ապրանքներ ամենաշատ արտադրող առաջին երկիրը, թե քանակական (72,9 տոկոս), թե գումարային (70,9 տոկոս) առումով, Չինաստանն է: Հաջորդը Հոնկոնգն է՝ գումարային առումով 12,6 տոկոս, քանակական առումով՝ 7,6 տոկոս: Գումարային առումով կեղծ ապրանքների արտադրության ծավալներով երրորդը Թուրքիան է՝ 2,8 տոկոս, իսկ քանակով՝ Հունաստանը՝ 4,79 տոկոս:

ԵՄ երկրների շուկայում վաճառվող կեղծ ապրանքների ծագման երկրների մեջ նշվում են նաեւ Արաբական Միացյալ Էմիրությունները, Սինգապուրը, Գերմանիան, Հնդկաստանը, Սիրիան եւ այլ երկրները:

Մարկուս Շնայդերը ներկայացրեց նաեւ տեղեկատվություն, թե ապրանքների կեղծումը եւ ապրանքահեռությունը ինչ վնասներ են հասցնում համաշխարհային տնտեսությանը: Ըստ այդմ, կեղծված ապրանքները ընդգրկում են համաշխարհային առեւտրի մոտ 10 տոկոսը, տարեկան վնասները կազմում են 200-300 մլրդ դոլար, կորցված աշխատատեղերը 200 հազար են: Մասնավորապես, կեղծված դեղորայքն ու տեխնիկական մասերը մեքենաների, ինքնաթիռների համար լուրջ սպառնալիք են մարդկանց կյանքին եւ առողջությանը:

Վերոնշյալից կարելի է ենթադրել, որ, եթե Եվրոմիության երկրներում, որտեղ բավականին խիստ միջոցառումներ են կիրառվում կեղծված ապրանք վաճառողների նկատմամբ, այդ երեւույթը նման տարածում ունի, ապա Հայաստանում վիճակն անհամեմատ վատ է: Առեւտրի կետերում եւ հատկապես տոնավաճառներում ամեն քայլափոխի կարելի է հանդիպել այդպիսի ապրանքների: Ուստի մեր հայրենակիցներին, հատկապես թուրքական ապրանքների որակի մասին չհիմնավորված պայծառ պատկերացում ունեցողներին, խորհուրդ կտայինք զգույշ լինել եւ չխաբվել որեւէ ապրանք ձեռք բերելիս:

Ա. Մ.

Քննվում է կամրջի փլուզման պատահարը

«Հարավկովկասյան երկաթուղի» ընկերությունից տեղեկացանք, որ Շորժա-Վարդենիս վագուրդի երկաթուղային կամրջի փլուզման հանգամանքները քննելու նպատակով ստեղծվել է հատուկ հանձնաժողով: Հիշեցնենք, որ կամուրջը փլուզվել է նոյեմբերի 15-ին վերանորոգման ժամանակ, պատահարի հետեւանքով մահացել էին 3 հոգի, նաեւ եղան վիրավորներ:

Երբ պարզ լինեն պատահարի քննության արդյունքները, կազմվելու է կատարվածի պատճառների մասին եզրակացություն, նաեւ միջոցներ կձեռնարկվեն անվտանգության կանոնները խախտած անձանց պատասխանատվության ենթարկելու:

Ի. Պ.

Մթնոլորտի հետագա ջերմացումը 2100-ին կառաջացնի մեծ չրհեղեղ

Մինչեւ 2100 թվականը մեր մոլորակի ջերմաստիճանը 4 աստիճանով կբարձրանա, եթե կլիմայի փոփոխությունը կանգնեցնելու նոր միջոցներ չձեռնարկվեն: Այս պնդումն է արվում Համաշխարհային բանկի նոր զեկուցագրում, որը վերնագրված է՝ Turn Down the Heat.

Եթե ոչինչ չփոխվի, ապա դարավերջին համաշխարհային օվկիանոսը կբարձրանա, հեղեղելով ափամերձ քաղաքները, պարենը կպակասի, տեղի կունենան եղանակի ծայրահեղ փոփոխություններ, նախազգուշացնում են փաստաթղթի հեղինակները:

Նրանց կանխատեսումների համաձայն, կլիմայի փոփոխություններ տեղի կունենան աշխարհի բոլոր տարածաշրջաններում, ըստ որում չորային տարածքները էլ ավելի կչորանան, խոնավ շրջանները կդառնան էլ ավելի խոնավ, նշում է Ինտերֆաքս գործակալությունը:

Ըստ ՀԲ կանխատեսումների, ջերմաստիճանը 3 աստիճանով կբարձրանա, եթե նույնիսկ աշխարհի բոլոր պետությունները կատարեն ջերմոցային գազերի արտանետումները կրճատելու իրենց պարտավորությունները:

Սակայն իրադարձությունների վատթարագույն ընթացքը հնարավոր է կանխել: «Չորս աստիճան համաշխարհային ջերմացումից հնարավոր է խուսափել եւ ջերմացումը պահել երկու աստիճանից ցածր մակարդակի վրա», հայտարարել է ՀԲ ղեկավար Ջիմ Են Կիմը:

Կլիմայի փոփոխությունների դեմ մղվող պայքարի ծրագրերի շրջանակներում Համաշխարհային բանկը 130 երկրում արդեն շուրջ 50 մլրդ դոլարի ներդրումներ է կատարել:

ԱԶԳ

Ընթացիկ

Խորհրդարանում եվրոինտեգրման մթնոլորտ էր

Երեկ խորհրդարանում, կարելի է ասել, արեւմտյան օր էր. նախ ԱԺ փոխխոսնակ Հերմինե Նաղդալյանը, որպես Հայաստան-ԱՄՆ խորհրդարանական խմբի ղեկավար, ընդունեց Հայաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Հեֆերնին եւ դեսպանատան քաղաքական գծով պատասխանատու Քրիստոֆեր Անդերսոնին, ու հայկական կողմից Օբամայի ընտրվելու կապակցությամբ շնորհավորանքներից բացի՝ արդար եւ թափանցիկ նախագահական ընտրությունների հավաստիացումներ հնչեցին:

Այդպես եւ խորհրդարանում եվրոպական թեմաներով մի կարեւոր քննարկում էլ զուգահեռ էր ընթանում՝ ԱԺ Հայաստան-Եվրամիություն խորհրդարանական համագործակցության հանձնաժողովի հայկական պատվիրակության, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերակցության համատեղ ջանքերով, որին ներկա էին նաեւ Հայաստանի կառավարության, ինչպես նաեւ ԵՄ Արեւելյան գործընկերության քաղաքացիական հասարակության Հայաստանի ազգային պլատֆորմի, միջազգային այլ կառույցների ներկայացուցիչներ:

Ըստ Ազգային ժողովի լրատվության՝ Հայաստան-ԵՄ համագործակցության ԱԺ հանձնաժողովի նախագահ Սամվել Ֆարմանյանն իր բացման ելույթում նշել է, որ հանձնաժողովը մշտական գործող ձեւաչափ է, եւ երեկվա նիստը քաղաքացիական եւ կառավարական շրջանակների տեսակետներն է հստակեցնում՝ հաջորդ, նոյեմբերի 28-29-ին Բրյուսելում տեղի ունենալիք նիստի օրակարգի վերաբերյալ: Հանձնաժողովը խնդիր ունի նպաստելու Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարմանն ու նպաստելու բարեփոխումների ընթացքին: Ս. Ֆարմանյանը մի անգամ եւս ընդգծեց այն միտքը, ինչ սովորաբար նման ձեւաչափերում մշտապես ասվում է՝ եվրոինտեգրումը Հայաստանի արտաքին քաղաքականության գերակա ուղղությունն է, եւ Հայաստանը ներգրավված է ԵՄ համագործակցության ծրագրերում: Ս. Ֆարմանյանն այս տարին այս առումով հագեցած համարեց՝ «խոր եւ համապարփակ ազատ առեւտրի համաձայնագրի» բանակցություններ, էական առաջընթաց Հայաստան-ԵՄ ասոցացման համաձայնագիրը գործառնելու ուղղությամբ, Արեւելյան գործընկերության խորհրդարանական ձեւաչափ «Եվրոնեսթի» գործունեություն: Ողջունվեց նաեւ քաղաքացիական հասարակության տեսակետների երեկվա ներկայացումը խորհրդարանական շրջանակներին, որը նաեւ արդյունավետ համարեց Հայաստանի ազգային պլատֆորմի ղեկավար Սեյրան Մարտիրոսյանը: ԵՄ պատվիրակության ղեկավար Տրայան Հրիստեան խորհրդարանական քննարկումները ԵՄ հետ Հայաստանի համագործակցության խորացման հիմք համարեց՝ նշելով, թե այս ուղղությամբ դրական քայլերն ակնհայտ են, որոնք վկայում են, թե բանակցությունները ճիշտ ուղու վրա են ու անհրաժեշտ է շարունակել բարեփոխումները Հայաստանում: Եվ գեղեցիկ համեմատություններից էլ զերծ չմնաց՝ խորհրդարանն անվանելով կամուրջ իշխանության եւ քաղաքացիական հասարակության միջեւ, չզլանալով նաեւ հիշել, որ ԱԺ-ն անելիք ունի եվրոպական եւ հայկական օրենսդրությունները համապատասխանեցնելու առումով:

ԱԳՆ ներկայացուցիչ Մհեր Մարգարյանը, Հայաստանի էկոնոմիկայի փոխնախարար Գարեգին Մելքոնյանն ու ԿԸՀ նախագահ Տիգրան Մուկուչյանը իրենց ոլորտների վերաբերյալ հստակեցումներ արեցին բրյուսելյան նիստի օրակարգին ընդառաջ:

Մ. Խ.

Երբ քվոտայի մասին են խոսում՝ վիրավորվեք

«Լիբերալ ճակատ» ազատդեմոկրատները նախագահական ընտրություններում կին թեկնածուի առաջադրման հարց են քննարկում: Երբ այդպիսի տարակուսելի եւ կասկածելի միտք ես լսում՝ մի քանի հարց միանգամից է ծագում: Եթե այդ կուսակցությունը ազատ է, դեմոկրատ, լիբերալ է, շատ ազատ է, այսինքն՝ մարդու ազատության, իրավահավասարության եւ ժողովրդավարության սկզբունքների է դավանում, որոնք բացառում են խտրականություն՝ ըստ սեռի կամ հասարակության շերտի եւ այլ պատկանելության, ապա արդեն իսկ վերը նշված մեն-մի միտքը մի քանի հարց միանգամից է առաջացնում. արդյո՞ք ԱԴ-ն այնքան ազատ, այնքան դեմոկրատ եւ մարդու իրավունքների իրական պաշտպան է: Այդ դեպքում ինչու է նախ սեռային պատկանելությունից խոսում, եւ ոչ ասենք այն բանից, որ այդ կուսակցության գաղափարական, խելացի ու պատրաստված անդամի է ուզում առաջադրել: Ինչու է նախ կին լինելու կռվանն ուզում օգտագործել, չէ՞ որ կին, ինչպես, ի դեպ, տղամարդ լինելը պետք է սորադաս լինի բազմաթիվ ավելի առաջնային հատկանիշների, որոնք անհրաժեշտ են մարդուն՝ նախագահի թեկնածու առաջադրվելիս: Եթե այդքան ազատ, դեմոկրատ ու իրավահավասարության կողմնակից կուսակցություն է, ինչո՞ւ է հիշել կոմունիստների քվոտայական մտածողությունը: Թե այնքան էլ ազատ, դեմոկրատ ու իրավահավասար չէ, այլ՝ դրանց ցուցափեղկը միայն, որը կերտողները որպես ցուցափեղկի բաղկացուցիչ հիմա էլ կին են ուզում տեսնել որպես նախագահի թեկնածու՝ բոլոր տեսակի պտուղներից ներկայացված լինի ընտրողի սեղանին, շատ լինի, քիչ չլինի...



Ճիշտն ասած՝ ոչինչ չունենք Անուշ Սեդրակյանի դեմ, որը տղամարդկանց ուզած խմբում կարող է աչքի ընկնել իր պրագմատիզմով եւ կրթվածության մակարդակով, բայց երբ ինչ-որ քաղաքական ուժ քննարկում է ոչ թե սոսկ նախագահի թեկնածու առաջադրելու հարցը ու խոսում այդ թեկնածությանն ու առհասարակ Հայաստանում նախագահի թեկնածուին ներկայացվելիք ամենաբարձր պահանջների մասին, այլ խոսում այն մասին, թե այդ մշակույթը պետք է ներմուծել՝ կին թեկնածու առաջադրելու, Հայաստանի սովորական քաղաքացին սկսում է մտածել, որ մարդիկ նախագահ են ուզում առաջ մղել ոչ թե իր խնդիրները լուծելու կամ երկրի առջեւ դրված մարտահրավերները դիմագրավելու համար, այլ ինչ-որ քեռիների ցանկությամբ կին թեկնածու առաջադրելու մշակույթ սերմանելու, ու հանգում են եզրակացության, որ այս երկրում, իրավ, ինչ-որ բան այն չէ:

Ընդհանրապես, սիրելի կանայք, քաղաքագետ լինեք, թե պաշտոնյա, երբ ձեզ հիշում են բացառապես քվոտայի խնդիր առաջանալու կամ մշակույթ ներմուծելու առիթով, ուրեմն վիրավորվեք այդպիսի մտայնությունից, քանի որ թերագնահատվում են ձեր իրական արժանիքները, ինտելեկտն ու կարողությունները: Աշխարհի հայտնի քաղաքական գործիչ-կանանց կյանքն ու գործունեությունը վկա:

Մ. Խ.

ԿԱՐՃ

Օծվեց Գավառի Սբ Կարապետ եկեղեցին

Նոյեմբերի 17-ին կայացավ Գավառի Ս. Կարապետ եկեղեցու օծման արարողությունը, որն այս տարվա ընթացքում ամբողջությամբ վերանորոգվել է:

Եկեղեցին կառուցվել է 1848 թ. Բայազետից ներգաղթած մեր հայրենակիցների կողմից՝ գլխավորությամբ Նոր Բայազետի հիմնադիրներ Արծրունի եղբայրների՝ Բարսեղ եւ Մկրտիչ աղաների:

Եկեղեցու նորոգության աշխատանքներին մասնակցեցին ոչ միայն գավառցիները, այլ նաեւ այլ բնակավայրերից բազում հայորդիներ:

Օծման արարողությանը ներկա էին ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, մարզային իշխանությունների ներկայացուցիչներ եւ հազարավոր գավառցիներ:

Ինչ է ասել ԱՄՆ պետդեպը եւ ...

1-ին էջից

Այդուհանդերձ, ըստ ադրբեջանական լրատվամիջոցի, պետդեպի հայտարարության մեջ ասվում է, որ ԱՄՆ արտաքին քաղաքական գերատեսչությունը իր քաղաքացիներին կոչ է անում «ծայրահեղ զգուշության հայկական եւ ադրբեջանական զորքերի՝ Լեռնային Ղարաբաղի շուրջը եւ հայ-ադրբեջանական սահմանի վրա հայ-ադրբեջանական զորքերի շփման գծի մերձակայքում»:

Ասվածը եթե դիվանագիտական լեզվից «թարգմանենք», ապա կստացվի, որ ԱՄՆ կառավարությունը ԼՂՀ այցելած իր քաղաքացիների անվտանգության համար զգուշանում է ոչ թե ԼՂՀ իշխանություններից կամ «ոչ ֆորմալ խմբավորումներից», այլ հատկապես՝ ադրբեջանական կողմից: Այսինքն, իր քաղաքացիների համար ԱՄՆ-ը վտանգավոր է համարում ադրբեջանական կողմի գործողությունները:

Այսքանից հետո պարզապես զարմանալի է, թե ինչո՞ւ ադրբեջանական մամուլը լայնորեն լուսաբանել է ԱՄՆ պետդեպի հայտարարությունը: Կամ չեն հասկացել դիվանագիտական ակնարկները, ինչը շատ հավանական է ՄԳԻՄՕ-ի երկարատեւ շրջանավարտ նախագահ ունենալու դեպքում, կամ լկտիացել են այն աստիճան, որ ամերիկյան կողմին փորձում են պարտադրել ասել այն, ինչ Վաշինգտոնը չի ցանկանում:

Վ. Ա.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԻԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահություն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենյակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայություն հեռ. 060 271115
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Կեղծ ադրանմներ՝ ինչպես են պայքարում Գերմանիայում եւ Հայաստանում

Կեղծված «Ռախշա» հայկական շուկայում

Շուկայում կեղծ ադրանմներ հայտնաբերելու դեպքում դրանք բռնագրավվում եւ հանվում են շրջանառությունից, վաճառողները ենթարկվում են տուգանքի, անկախ նրանից՝ իմացել են, որ այդ ադրանքը կեղծ է, թե ոչ: Ահա այսպիսի դաժան, բայց միանշանակ արդարացված պայքար է մղվում շուկայում հայտնված կեղծ ադրանքների դեմ Գերմանիայում: Այդ մասին լրագրողներին պատմեց Գերմանիայի Համբուրգի երկրամասի շրջանային դատարանի նախագահող, դատավոր Մարկուս Շնայդերը նոյեմբերի 17-18-ին Հայաստանի տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կազմակերպած սեմինարի ժամանակ:

Գերմանացի դատավորի խոսքերով, Գերմանիայում վերոնշյալ գործառույթներն իրականացնում են քաղաքացիական դատարանները՝ կեղծ ադրանքներից, անբարեխիղճ մրցակցությունից եւ մտավոր սեփականության իրավունքի խախտումներից տուժած ընկերությունների բողոքների հիման վրա: Մարկուս Շնայդերը հանգամանորեն ներկայացրեց Գերմանիայում ադրանքահեռության դեմ կիրառվող քաղաքացիա-իրավական միջոցառումները:

Անդրադառնալով հրավիրված սեմինարի նպատակին՝ տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախագահ **Արսակ Շաբոյանը** նշեց, որ հանձնաժողովի որոշումները հաճախ բողոքարկվում են տնտեսվարողների կողմից: Ու թեեւ, նրա հավաստմամբ, հանձնաժողովի տուգանքներից դժգոհ ընկերություններից դեռեւս ոչ մեկին վերջին երկու տարում չի հաջողվել դատարաններում բեկանել հանձնաժողովի որոշումը, այդուհանդերձ գերմանական փորձին ծանոթանալը կօգնի հանձնաժողովին սեփական որոշումները պատշաճ անել:

Ինչ վերաբերում է Հայաստանում կեղծ ադրանքների դեմ պայքարին, ապա, ըստ Արսակ Շաբոյանի, դրա դեմ պայքարը դժվարանում է, քանի որ վաճառող տնտեսվարողները պատճառաբանում են, թե դրանք ձեռք են բերել շուկայից, այսինքն, տոնավաճառներից, եւ չեն կարող իմանալ, թե որն է կեղծ, որը՝ ոչ: Մյուս կողմից, օրենսդրությունը հնարավորություն չի տալիս ոստիկանությանը ներգրավելու այդ գործում, քանի դեռ վաճառվող կեղծված ադրանքի ծավալը չի գերազանցել 200 հազար դրամը: Նման խնդրի է բախվել դռան փականների ռուսական «Էլբոր» ընկերությունը, որը Չինաստանում իր ադրանքի կեղծված տարբերակների պատճառով կորցրել է հայկական շուկան:

«**Ազգի**» հարցին, թե հնարավոր չէ՞ կեղծ ադրանք վաճառողին գտնել ՀԴՄ կտրոնի միջոցով, հանձնաժողովի նախագահն ասաց, որ վաճառողն էլ պատճառաբանում է, թե գնել է այլ վաճառողից եւ ՀԴՄ կտրոն էլ չի վերցրել կամ կորցրել է: Արսակ Շաբոյանը ընդգծեց, որ իրենք, բնականաբար, լուրջ կասկածներ ունեն կեղծ ադրանք վաճառողների ասածների իրավացիության հարցում: Մեր հաջորդ հարցին, թե արդյոք նպատակահարմար չէ՞ գերմանական փորձը կիրառելով պատժել այն կեղծ ադրանք վաճառողին, որի անվանումը գրված է ՀԴՄ կտրոնի վրա, Արսակ Շաբոյանը պատասխանեց, որ բոլոր խնդիրների լուծումը կլինի, եթե ապահովվի փաստաթղթաշրջանառության ամբողջ շղթան: Սակայն մինչ այդ Հայաստանում կեղծ ադրանքների հեղեղի դեմ պայքարելու միակ ճիշտ տարբերակը կլինի այն կեղծ ադրանք վաճառողին պատժելը, որն այլեւս չի հայտնում, թե որտեղից է ձեռք բերել այդ ադրանքը: Ինչպես դա արվում է Գերմանիայում, եւ ինչը բավականին լուրջ նախագգուշացում կլինի Հայաստանում մյուս կեղծ ադրանք վաճառողների համար:

Կեղծված «Ռախշա» հայկական շուկայում

Սեմինարի ժամանակ հանձնաժողովի ներկայացուցիչ Հայկ Վարդանյանը հայտնեց կեղծ «Ռախշա» լվացող միջոցի հայտնաբերման մասին, որը օրինական արտադրանքից դժվարությամբ զանազանեցին նաեւ սեմինարին ներկա լրագրողները: Այդուհանդերձ, դեռեւս բացահայտված չէ այն տնտեսվարողը, որն արտադրել է դա եւ նրան հայտնաբերելու միջոցառումները շարունակվում են:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Գործարկվեց «Պաշարների շտեմարան» կայքը

ՎիվաՍել-ՄՏՍ-ը՝ «ՄՏՍ» ԲԲԸ դուստր ընկերությունը, ուրախ է տեղեկացնել, որ ընկերության գլխամասային գրասենյակում կայացավ «Պաշարների շտեմարան» կայքի (http://lib.armedu.am) շնորհանդեսը: «Պաշարների շտեմարան» կայքը ստեղծվել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի ֆինանսական աջակցությամբ:

Միջոցառմանը մասնակցեցին Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը, ՎիվաՍել-ՄՏՍի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը, կրթական եւ տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) ծրագիր իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Էլեկտրոնային ուսումնական պաշարների շտեմարանի ստեղծման նպատակը կրթության ոլորտում ՏՀՏ ներդրման շարունակական զարգացման ապահովումն է: Մասնավորապես՝ էլեկտրոնային բովանդակության հարստացումը եւ ուսումնամեթոդական պաշարների միասնական տարածքի ստեղծումը: Կայքում ընդգրկվում եւ ըստ բնագավառների ու կրթական աստիճանների դասակարգվում են կրթական, ուսումնական եւ մեթոդական էլեկտրոնային պաշարները՝ դրանք հասանելի դարձնելով կրթության ոլորտի մասնագետներին, ուսուցիչներին, աշակերտներին եւ կայքի մյուս այցելուներին:

«Գիտելիքը մարդու զարգացմանը նպաստող գործիք լինելուց բացի, նաեւ պատասխանատվության խորհրդանիշ է: Մեզանից յուրաքանչյուրը կրթվում է՝ ինքն իրեն, միջավայրին ու նաեւ երկրին օգտակար լինելու համար: Ուզում եմ հավատալ, որ «Պաշարների շտեմարանը» կծառայի իր նպատակին եւ կդառնա ամենասեղմ ժամկետներում առավելագույն տեղեկատվություն ստանալու հրաշալի գործիք»,- նշել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:

«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի մասին.

Կազմակերպության գործունեության նպատակը Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրումն ու դրա շարունակականության ապահովումն է:

Գործունեության հիմնական ուղղություններն են՝

Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցի (ՀԴԻՑ) կառավարում ու սպասարկում:

Շարժական ինտերնետային-համակարգչային կայանի (ՇԻՀԿ) շահագործում

«Հայկական կրթական միջավայր» պորտալի (http://www.armedu.am) եւ ենթակայքերի՝ Կրթական ֆորումի (http://forum.armedu.am/), Հեռավար ուսուցման համակարգի (http://learning.armedu.am/) եւ Պաշարների շտեմարանի (http://lib.armedu.am) շահագործում:

«Higher Education in Armenia» (www.studyinarmenia.org) եւ «Ավարտական փաստաթղթերի հաշվառման համակարգ» (http://students.armedu.am/) կայքերի շահագործում, ԿՏԱԿ-ի կայքի (http://ktak.am) վարում:

Հանրակրթության կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՏՀ) եւ Աշակերտների հաշվառման տեղեկատվական համակարգի (ԱՀՏՀ) շահագործում:

Ինֆորմատիկայի ուսուցիչների եւ դպրոցների համակարգչային ուսումնական կենտրոնները սպասարկող մասնագետների վերապատրաստում:

Ուսումնաօժանդակ ձեռնարկների ստեղծում, դպրոցներում էլեկտրոնային գրադարանների հիմնում:

Համակարգչային ծրագրերի արտոնագրում:

Կրթության ոլորտում իրականացվող ՏՀՏ ծրագրերի համակարգում եւ համագործակցություն տեղական եւ միջազգային կազմակերպությունների հետ:

ՄԵԹԵԼ

Հակոբ Չալալյան՝ հնավաճառ, բանաստեղծ ու թարգմանիչ

Ոչ միայն Հունաստանում, այլեւ նրա սահմաններից դուրս Հակոբ Չալալյանին շատերն են ճանաչում: Նա գրող է, թարգմանիչ եւ հնավաճառ: Նրա երկհարկանի բնակարանի առաջին հարկում գորգեր են, արձաններ, մոմակալներ, զարդեր, զարդատուփեր, որոնք հարյուրամյակների պատմություն ունեն: Հին իրերով հետաքրքրվողները գիտեն, թե Աթենքում որտեղ կարող են հիանալ յուրահատուկ ու թանկարժեք իրերով: Չալալյանը հյուրընկալ է, սիրալիր, յուրաքանչյուր այցելուի ներկայացնում է իրերի պատմությունն ու շեշտում հայկականությունը:

«Յուրաքանչյուր հնավաճառ ձեզ կասի, որ ամենաարժեքավոր իրերը նա կգտնի ամենաանհավանական վայրերում: Պատահում է, գնում եմ շուկա միրգ գնելու ու նկատում, որ դիմացի մայթին ինչ-որ մեկն իրեր է վաճառում: Նա էլ չգիտի, թե գետնին շարված զարդատուփը կամ մոմակալն ի՞նչ արժեք են ներկայացնում: Սա արկածախնդիր աշխատանք է, հաջողության հասնելու համար երկու բան է անհրաժեշտ՝ ռիսկ եւ նվիրում: Եթե աշխատանքդ չսիրես, հաջողությունը քեզ չի ժպտա», ասում է նա:

Ֆրանսիա, Իտալիա, Թուրքիա, Քուվեյթ ու էլի մի քանի տասնյակ երկրներ է այցելել Չալալյանը հին հայկական իրեր գտնելու հույսով: Ասում է՝ անգամ ամենաանհավանական իրավիճակներում է հասել հաջողության. «Քուվեյթում էի՝ հիսուն աստիճան շոգ, ավելի քան երեք ժամ շուկայում եմ թափառել, հետո հին թաղամասերում շրջել, որ ինչ-որ հետաքրքրական բան գտնեմ, բայց ոչինչ չկար: Հիասթափվել էի, բարկացել, նեղսրտել: Արդեն հույսս կորցրած հետ էի վերադառնում, տեսա, որ մի արաբ գետնին փռած իրեր էր վաճառում: Դրանցից մեկն աչքիցս չվրիպեց, քանի որ ընդգծված հայկական զարդանախշեր ուներ: Վաճառողը չգիտեր, որ պղնձե սրվակը հայ վարդապետին է պատկանում եւ մի քանի դարի պատմություն-առաքելությունը հայրենասիրությունն է, իմ ամբողջ գործունեությունն ուղղված է միայն մեկ նպատակի՝ աշխարհին ներկայացնել Հայաստանն ու հայ մշակույթը»:

Շարականներ, Մեսրոպ Մաշտոց, Չարենց ու Սեւակ, Իսահակյան եւ Թումանյան: Չալալյանը հունարեն է թարգմանել հայ բանաստեղծներին, հրատարակել գիրք հայ տպագրության ու երաժշտության մասին: «Իմ նպատակն է Հայաստանն ու հայերին ներկայացնել աշխարհին, ներկայացնել մեր արժեքները: Հենց այդ նպատակով, արդեն 41 տարի աշխատում եմ «Կոմիտաս» աշխատության վրա, որը շուտով կհրատարակվի: Սակայն իմ գործունեությունն ուղղված է հայ-հունական բարեկամությունն առավել ամրապնդելուն»: Վերջին յոթ տարին Չալալյանը թարգմանում է Հունաստանի օրհներգը հայերեն: Այն բաղկացած է 158 տնից եւ շուտով կներկայացվի հայ ընթերցողների դատին:

ՀԱՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Աթենք, Հունաստան

Էդուարդ Ղազարյան. Մանկավարժի մասնագիտությունը պետք է կրկին արժեւորվի

Էդուարդ Սուրենի Ղազարյան
Ֆ.մ.գ. դոկտոր պրոֆեսոր, ակադեմիկոս
ՀՊՄՀ ռեկտոր-1987-1988թթ.
Այժմ՝Հայ-ռուսական սլավոնական համալսարանի Մաթեմատիկայի եւ բարձր տեխնոլոգիաների ինստիտուտի տնօրեն

Բողոքներ, վարկաբեկիչ տեղեկատվություն, բարոյահոգեբանական վատ մթնոլորտ. այսպիսի ասեկոսեներ էին պտտվում Մանկավարժական ինստիտուտի շուրջը, երբ բարձրագույն եւ միջնակարգ մասնագիտական կրթության նախարարության գիտության գծով տեղակալ Էդուարդ Ղազարյանին առաջարկեցին ստանձնել ռեկտորի պաշտոնը:

Տարիներ անց մտաբերում է. չնայած դրան՝ համաձայնել է եւ այսօր էլ մեծ ջերմությամբ ու սիրով է հիշում Մանկավարժական համալսարանն ու այնտեղ պաշտոնավարած կարճ, բայց շոշափելի փոփոխություններով լի տարիները:

«Այդ ժամանակ բուհերն իրենք էին անցկացնում ընդունելության քննությունները, կային մասսայական արտագրություններ, նյութատեխնիկական վիճակը բուհում եւս անմխիթար էր: Կարճ ժամանակահատվածում մենք կարողացանք փոխել ստեղծված վիճակը. դրան նպաստեցին նաեւ կադրային փոփոխությունները. աշխատակազմը համալրվեց անբասիր կենսագրությամբ եւ բարձրակարգ մասնագետներով», հիշում է **Էդուարդ Ղազարյանը**:

Հաշվի առնելով այդ տարիներին ուսուցիչների գիտելիքների ցածր մակարդակը՝ ուսումնական ծրագրերում կատարվեցին լուրջ փոփոխություններ. հենց Էդուարդ Ղազարյանի նախաձեռնությամբ մանկավարժներն առաջին անգամ ուսուցանեցին առարկայի դասավանդման մեթոդիկայի գիտական հիմունքներ:

Խոսելով 21-րդ դարի մանկավարժի մասին՝ փորձառու դասախոսն ափսոսում է՝ ուսուցչի գործառույթներն այսօր շատ են փոխվել. «20-30 տարի առաջ աշակերտի գիտելիքի միակ աղբյուրը մանկավարժն էր: Հիմա իրավիճակն այլ է. նա պետք է լինի ճարտարապետ-մեթոդաբան, աշակերտին կարողանա ուղղորդել սովորել, գիտելիք ձեռք բերել. նա պետք է սովորի սովորեցնել»:

Հայաստանի ԳԱԱ ակադեմիկոս Էդուարդ Ղազարյանի դիտարկմամբ ժամանակակից ուսուցիչը պետք է լինի նաեւ անթերի մասնագետ, կիրառի ուսուցման տարաբնույթ մեթոդներ, անկախ մասնագիտությունից՝ կատարյալ տիրապետի մայրենիին, աշակերտների մեջ կերտի ազգային բնավորություն. «Այսօրվա երիտասարդներն ընտրում են տնտեսագետի, իրավաբանի, վաստակաւոր դեմքում՝ լեզվաբանի մասնագիտությունը: Ossn Բիսմարկն ասում էր՝ավստրո-պրուսական պատերազմում հաղթեց ուսուցիչը, նույնը եղավ նաեւ Լեռնային Ղարաբաղում: Այդ ժամանակ մանկավարժը, գիտնականը հերոսներ էին: Ցանկանում եմ, որ Մանկավարժականը կրկին գրավիչ դարձնի այդ մասնագիտությունը եւ վերադարձնի դրա իրական արժեքները»:

Էդուարդ Ղազարյանը վստահ է՝ մանկավարժական կրթության համալսարանականացումը կլուծի շատ խնդիրներ. դրան կօգնի նաեւ կրթական երկաստիճան համակարգի ճիշտ կիրառումը:

Ակադեմիկոսը չի հուսահատվում. անպատասխանատվությամբ վարակված սերնդի մեջ էլ դեռեւս կան «խենթեր», ովքեր ընտրում են բնական գիտություններ. ի վերջո, հայն այդ ունակություններն իր արյան մեջ է կրում: Մարդկային հատկանիշներից Էդուարդ Ղազարյանը կարեւորում է բարությունը, հոգատարությունն, արժանապատիվ կենսակերպն ու կոոպինին օգնելու պատրաստակամությունը՝ ակամա կարծես բնութագրելով հենց ինքն իրեն:

Մանկավարժական համալսարանի ֆիզիկատեխնոլոգիական ֆակուլտետի նախկին դասախոսը, շնորհավորելով բուհի պրոֆեսորադասախոսական կազմին եւ ուսանողներին, ասաց. «Մանկավարժականը միշտ էլ կարեւորվել է մեր ժողովրդի կյանքում: Բուհն ուսուցչական կադրեր պատրաստող դարբնոց է, որն ունի մեծ առաքելություն կրթական ամբողջ համակարգում. այն պետք է ժամանակակից դպրոցն աղահովի բարձր որակավորմամբ ուսուցիչներով: Ուրախալի է տեսնել Մանկավարժականի վերջին շրջանի հաջողությունները. նոր ձեռքբերումներ, գիտական ոլորտում երիտասարդ դասախոսների ներգրավում եւ եռանդուն աշխատանք եմ մաղթում 90-ամյա վաստակ ունեցող համալսարանին»:

ՄԱՐԻՆԵ ԱՂԱԲԵԿՅԱՆ

Ես հավատում եմ Մանկավարժականի հաջողություններին

Միսակ Արշամի Դավթյան
Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
ՀՊՄՀ պատվո պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ
ՀՊՄՀ ռեկտոր 1999-2002 թվականներին
Այժմ՝ ԵՊՀ կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ, ՀՊՄՀ դասախոս
Լավ գիտնական, փորձառու դասախոս, ուսումնական գործի հմուտ կազմակերպիչ



«Ես հավատում եմ Մանկավարժական համալսարանի հետագա հաջողություններին. նա բոլոր ժամանակներում պատվով է կատարել իր առաքելությունը եւ պատրաստել մանկավարժների գրագետ սերունդ», այսպես նշանավորեց 90-ամյա պատմություն ունեցող բուհի գործունեությունը նախկին ռեկտորը:

Քաջատեղյակ լինելով կրթության ոլորտի խնդիրներին՝ նա հետաքրքրությամբ չի ընդունել ռեկտորի պաշտոնը ստանձնելու առաջարկը: Տարիների հեռվից Միսակ Դավթյանը հիշում է իր պաշտոնավարման տարիները, երբ արմատական վերափոխումներ էին տեղի ունենում բոլոր բուհերում, այդ թվում նաեւ Մանկավարժական ինստիտուտում:

Կրթական ավանդական համակարգը պետք է ավելի մոտեցվեր արեւմտյանին, որի հետ կապված բազմաթիվ հարցեր էին ծագում հատկապես հումանիտար առարկաների վերաբերյալ:

«Բոլոր ժամանակներում կրթության վերափոխման հարցը եղել է օրակարգային: Այդ գործում Մանկավարժական համալսարանը՝ ի դեմս իր գիտնական-դասախոսների, միշտ էլ գտնվել է բարձրության վրա եւ կրթական էական փոփոխություններում ունեցել իր մեծ ավանդը», նշեց Միսակ Դավթյանը:

Նա չի սիրում թվարկել իր պաշտոնավարման տարիներին Մանկավարժականի ունեցած բազում ձեռքբերումները. առանձնացնում է միայն, որ կարեւորագույն հարցերի լուծման ժամանակ իր աշխատաոճում առաջնորդվել է կոլեկտիվի սկզբունքով՝ յուրաքանչյուր հարցի շուրջը համախմբելով առավել շատ դասախոսների:

Անդրադառնալով ներկայիս դասախոսների որակական հատկանիշներին՝ գիտնականը նշեց. «Լավ դասախոսն առաջին հերթին պետք է լինի լավ գիտնական ու հետազոտող. նրա աշխատանքի հիմքը պետք է ունենա գիտական մոտեցում, որպեսզի խորն ըմբռնի յուրաքանչյուր փաստի էությունը»:

Համեմատելով տարբեր սերունդներին՝ Միսակ Դավթյանը նկատում է.«Այսօրվա ուսանողներն ավելի մեծ ձգտում ունեն կրթվելու եւ գիտության մեջ ներգրավվելու. գիտահետազոտական աշխատանքներին անմիջական մասնակից դարձնելու համար պետք է նրանց ուսուցումը կազմակերպել հենց գիտական միջավայրում»:

Միսակ Դավթյանը ուսանողների հետագա հաջողությունները կապում է դասախոսների ճիշտ աշխատանքի հետ. դասախոսի մեջ պետք է պարտադիր մեկտեղվեն մարդկային բնավորության լավագույն հատկանիշներն ու լավ մասնագետ լինելը:

Դասավանդման բազմամյա վաստակ ունեցող դասախոսը ուսանողների եւ իր միջեւ երբեւէ արհեստական սահման չի պահպանել. ուսանողը շատ զգայուն տարր է, նրա հանդեպ պետք է դրսեւորել առավելագույն օբյեկտիվություն:

Միսակ Դավթյանը բուհի որակը որոշում է նրանում աշխատող կադրերով. չէ՞ որ համաշխարհային ճանաչում վայելող համալսարաններն աչքի են ընկնում պրոֆեսորադասախոսական կազմի բարձր վարկանիշի շնորհիվ:

Տարբեր պաշտոններ վարելիս նա երբեւէ չի դադարել ղեկավարել ԵՊՀ կենսաֆիզիկայի՝ իրեն հարազատ դարձած ամբիոնը, որի աշխատակիցներն իր համախոհներն են եւ գիտական առաջընթացի հիմնական պատճառը:

Միսակ Դավթյանը վստահեցնում է՝ բուհի ղեկավարի պաշտոնում վերընտրվելու դեպքում կփորձի ավելի անմիջական դարձնել դասախոսների հետ կապը. նրանց գնահատելու, գիտական մակարդակը պարզելու համար պետք է ղեկավարն անմիջական կարծիք կազմի:

Դիմելով բոլոր ուսանողներին՝ բազմավաստակ մանկավարժը նրանց խորհուրդ տվեց ուսումնառության տարիներին հնարաջան աշխատել եւ չտարբերակել կարեւոր ու անկարեւոր առարկաներ:

Միսակ Դավթյանն իր կյանքի անմոռանալի պահերը կապում է ընտանիքի հետ, սակայն որպես գիտնական իր համար անմոռաց է համարում յուրաքանչյուր զեկույց ու գիտական հանդիպում:

Գիտնական, դասախոս, ուսումնական գործի կազմակերպիչ...այսպես է բնորոշում ինքն իրեն Միսակ Դավթյանը, որը յուրաքանչյուրի անհաջողությունն իր մեջ է փնտրում:

ՔՐԻՍՏԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Աստղեր կարելի է դիտել նաեւ Մանկավարժականի աստղադիտարանից

«Ինչպես զինվորի համար ավտոմատն է կարեւոր, այդպես էլ աստղագետի համար աստղադիտակն է անհրաժեշտություն», կարծում է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ **Սերգեյ Ներսիսյանը**:

Թերեւս այս համոզմունքը հիմք հանդիսացավ, որ 2004 թվականի նոյեմբերի 12-ից Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում հիմնադրվի աստղադիտարան:

Այն Հայաստանում գործող երկրորդ աստղադիտարանն է՝ Բյուրականի աստղադիտարանից հետո:

1957 թվականի արտադրության աստղադիտակը Լենինգրադի օպտիկամեխանիկական միավորման ստեղծած սարքն է: Համատեղելով եղած նյութերն ու հնարավորությունները՝ ստեղծվեց աստղադիտարանը: Այն արժեւորում է ուսումնական ընթացքը, քանի որ տեսազննական է դարձնում ստացած գիտելիքները:

Աստղադիտարանը միակ «բաց» լաբորատարիան է, այցելուների մուտքն այստեղ անվճար է: Ուսանողների եւ այցելությունների հաճախելիությունը կախված է եղանակային պայմաններից եւ աստղային ժամանակացույցից: Երբեմն այցելությունները ունենում են տեսականն ու գործնականը համատեղելու նպատակ:

Մեր աստղադիտարանի մասին քչերը գիտեն: Սակայն ներկայումս նախապատրաստվում է կայք, որի միջոցով մարդիկ կիմանան աստղադիտարանի մասին իրենց հետաքրքրող ամեն ինչ:

«Սովորաբար աստղադիտարանները տեղակայված են լինում ոչ շատ լուսավոր վայրերում, քանի որ շրջապատի լուսավորությունը երբեմն խանգարում է աշխատանքներին: Չնայած այդ հանգամանքին՝տարեցտարի մեծանում է աստղադիտարանի այցելուների թիվը:

Ի դեպ, շատ են այցելուները նաեւ հանրապետության մարզերից», ուրախությամբ նշում է Սերգեյ Ներսիսյանը:

Համալսարանի ղեկավարության եւ ֆիզիկատեխնոլոգիական ֆակուլտետի դեկանատի շնորհիվ աստղադիտարանի աշխատանքները շուտով կդրվեն գիտական հիմքի վրա:

Սերգեյ Ներսիսյանը ափսոսում է, որ մեզ մոտ չկան անգամ աստղաշուշարաններ:

«Մարդիկ նայում են երկնքին եւ կարծես վերափոխվում են. նրանք գտել են մի հրաշալի աշխարհ՝ երկինքը, որի մասին իրենք մոռացել էին», հավաստում է դոցենտ Սերգեյ Ներսիսյանը:

Նա նաեւ ափսոսում է, որ աստղագիտություն առարկան դուրս է մղվել հանրակրթական ծրագրից: Սակայն հույս ունի, որ կրթության եւ գիտության նախարարությանն հանձնված աստղագիտություն առարկայի չափորոշիչները կընդունվեն, եւ կրկին կընդգրկվի դպրոցական ծրագրերում:

Քուրդ կալանավորները 68-րդ օրը դադարեցրին հացադուլը

Դրան նպաստեց Օջալանը՝ ցույց տալու համար, որ ինքն է առաջնորդում Թուրքիայի քրդերին

1980-ի սեպտեմբերի 12-ին Թուրքիայում տեղի էր ունեցել բանակի գեներալ Քենան Էվրենի գլխավորած պետական հեղաշրջումը: Դրա առաջնահերթ թիրախը դարձան քրդական շարժումը առաջնորդող քուրդ մտավորականներն եւ առաջադեմ թուրք երիտասարդությունը: Թեեւ հեղաշրջումից 32 տարի է անցել, սակայն Թուրքիան դեռեւս չի ձերբազատվել հեղաշրջման հետեւանքներից: Դրա վառ ապացույցը 1982-ի գեներալ Էվրենի վարչակարգի սահմանադրությունն է, որն առ այսօր ուժի մեջ է երկրում, իսկ ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական եւ Ազգայնական շարժում կուսակցությունները, նրանց հետ նաեւ քրդական «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցությունը ամեն կերպ վիժեցնում են վարչապետ Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության «քաղաքացիական» սահմանադրություն ընդունելու բոլոր ջանքերը:

Ի դեպ այս կուսակցությունները ժամանակին վիժեցրել են նաեւ Էրդողանի «քրդական նախաձեռնությունը», որն անկախ սահմանափակվածությունից, այնուամենայնիվ, որոշակի բարելավում էր Թուրքիայում բնակչության 1/4-ը կազմող քրդերի իրավական դրությունը երկրում:

Դառնալով ընդդիմության հարձակումների թիրախ, վարչապետ Էրդողանը «քրդական նախաձեռնությունը» փոխարինել էր ժողովրդավարական նախաձեռնությամբ եւ, ի վերջո, հրաժարվել թե մեկից եւ թե մյուսից: Ինչպես երեւում է նա հրաժարվելու վրա է նաեւ «քաղաքացիական» սահմանադրությունից: Կնշանակի, Թուրքիայում ուժի մեջ կմնան թուրքական այսպես կոչված ազգային պետության ունիտար կառուցվածքն ու թուրք ազգի «միասնականությունն» ապահովող հոդվածները, որոնց առկայությամբ կշարունակվեն կոպտորեն ոտնահարվել ինչպես ազգային փոքրամասնությունների, այնպես էլ էթնիկ եւ կրոնական խմբավորումների իրավունքները: Հետեւաբար, թուրքական ժողովրդավարությունը մշտապես թերի կմնա եւ այդ թերությունը իբրեւ կանխարգելիչ գործոն, կկասեցնի ժողովրդավարության զարգացումը երկրում:

«Քրդական նախաձեռնության» ու «քաղաքացիական» սահմանադրության հարցերում ընդդիմադիր եւ հատկապես «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության հակազդեցությունը Էրդողանին դառնում է ինքնանպատակ, երբ հաշվի ես առնում Թուրքիայի 66 բանտերում հացադուլ հայտարարած շուրջ 680 կալանավորի եւ ազատազրկվածի պահանջները:

Որո՞նք են դրանք: Մինչ հարցին պատասխանելը նշենք, որ հացադուլը հայտարարվել էր սեպտեմբերի 12-ի հեղաշրջման օրը: Այսինքն այդ ամսաթիվը խորհրդանշական է հացադուլավորների համար, որոնք քուրդ են: Ազգությամբ քուրդ են նաեւ «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության պատգամավորները, որոնք ի համերաշխություն կալանավորների, հացադուլի էին նստել Թուրքիայի ազգային մեծ ժողովում:

Ինչ վերաբերում է հացադուլավորների պահանջներին, ապա նրանք հացադուլին վերջ տալու համար Էրդողանի կառավարությանն առաջադրում էին գլխավորապես 2 նախապայման. առաջինը՝ մայրենի լեզվով կրթության իրավունք քրդերին, երկրորդ՝ Իմրալի կղզում բանտարկված PKK-ի առաջնորդ Աբդուլլա Օջալանի մեկուսացվածության վերացում, ինչը ենթադրում էր վերջինի փոխադրումը այլ կալանավայր, ինչպես նաեւ ազգականներից բացի դատապաշտպանների հետ տեսակցության իրավունքի վերականգնում:

Էրդողանի կառավարությունը քուրդ աշակերտներին տվել է ոչ թե մայրենի լեզվով կրթության, այլեւ դպրոցում քրդերեն ուսուցանելու իրավունք: Կրթության դեպքում մնացած առարկաներն էլ պետք է քրդերենով անցնել, իսկ դրա համար անհրաժեշտ է սահմանադրության համապատասխան հոդվածի փոփոխությունը: Ինչ վերաբերում է Օջալանին, եթե կառավարությունը մեկուսացումից դուրս բերելու համար նրան տեղափոխի քրդաբնակ Դիարբեքիրի կալանավայր, ինչպես պահանջվում է, ապա ինքնակամ կնպաստի կալանավայրում առաջնորդի հերոսացմանը:

Որքան էլ «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության պատգամավորները մեղադրեն վարչապետ Էրդողանին, թե ցանկության դեպքում կլուծի քրդական հարցը, իսկ Ազգայնական շարժում կուսակցությունը՝ քրդերին ինքնավարություն տրամադրելու միջոցով ազգային շահերին դավաճանելու, իսկ Ժողովրդա-հանրապետական կուսակցությունը «քրդական նախաձեռնությունից» հրաժարվելու մեջ, առաջադրվող նախապայմանները վեր են Էրդողանի ուժերից: Նա ինքնուրույն ոչ միայն չի կարող լուծել Թուրքիայում տասնամյակների վաղեմություն ունեցող քրդական հարցը, նույնիսկ ի վիճակի չէ վերացնել Օջալանի մեկուսացվածությունը, մանավանդ որ Էրդողանի քրդական նախաձեռնությունը տապալել են նրանք, ովքեր հիմա հանդես են գալիս ոչ իրատեսական պահանջներով:

Էրդողանը նույնիսկ ի վիճակի չեղավ դադարեցնել կալանավորների հացադուլը: Դրա համար, ըստ երեւույթին, անհրաժեշտ էր Օջալանի միջամտությունը: Նոյեմբերի 17-ին Օջալանը իր եղբոր միջոցով կոչ է արել եւ այդ կոչով 680 քուրդ կալանավոր 68 օր հետո վերջ են տվել հացադուլին: Մնում է սպասել իմանալու, թե կոչի դիմաց Էրդողանի կառավարությունը ի՞նչ է խոստացել քրդերին: Բայց ինչ էլ որ խոստացած լինի, քրդական հարցի «լուծման» Էրդողանի տարբերակը չի բավարարելու քրդերին, որոնց թեկուզ կալանավայրից, առաջնորդում է Աբդուլլա Օջալանը:

ՀԱԿՈԲ ՉԱՔԲՅԱՆ

Իսրայելը վերջնագիր ներկայացրեց «Համասին»

Իսրայելը երեկ առավոտյան 36-ժամյա վերջնագիր է ներկայացրել պաղեստինյան «Համաս» արմատական շարժմանը: Եթե պաղեստինցիները չդադարեցնեն Իսրայելի տարածքի հրթիռակոծությանը եւ Գազայի հատվածի սպառազինմանը, ապա իսրայելական բանակը եւ օդուժը կուժեղացնեն իրենց հարձակումը: Այդ մասին հաղորդում է Իսրայելի բանակային ռադիոն:

Վերջնագրի մասին հայտարարել է Իսրայելի ֆինանսների նախարար Յուվալ Ստեյնիցը, մանրամասնելով, որ պահանջը «Համասին» է փոխանցվել Եգիպտոսի միջնորդությամբ: Նախարարի խոսքերով, հրեական պետությունը ներկայումս «ճամփաբաժնի վրա է», կամ կհաստատվի հրադադար, կամ էլ կընդլայնվեն ռազմական գործողությունները: Վերջինիս դեպքում տեղի կունենա հարցի «լրիվ ռազմական լուծում»:

Երեկ նաեւ հայտնի դարձավ, որ Իսրայելը ապահովության նկատառումներով փոփոխել է Թել Ավիվի «Բեն Գուրիոն» միջազգային օդանավակայանի չվերթերի գծերը, սակայն չվացուցակը մնացել է անփոփոխ:

Իսրայելցիների ռազմական գործողությունը սկսվեց նոյեմբերի 14-ին՝ պաղեստինյան կողմի հրթիռակոծությանը ի պատասխան: Երեկվա տվյալներով, հակամարտության ընթացքում արդեն սպանվել է 80 պաղեստինցի, իսրայելական կողմի կորուստը 3 մարդ է:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունը երեկ իսրայելցիներին եւ պաղեստինցիներին հորդորել է Եգիպտոսի հետ համագործակցել Գազայի հատվածում բռնություններին վերջ դնելու նպատակով: Ռոյթեր գործակալությունը մեջբերում է նրա այն խոսքերը, որ «կողմերը պետք է օժանդակեն հրադադարի անհապաղ հաստատմանն ուղղված Եգիպտոսի բոլոր ջանքերին»:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Վրաստանը հոգնել է երկիշխանությունից

Վրաստանում վերջերս անցկացված խորհրդարանական ընտրություններից հետո նորընտիր վարչապետ Բիձինա Իվանիշվիլին փաստորեն սկսել է կառավարել երկիրը: Նախագահ Միխեիլ Սաակաշվիլին իրավաբանորեն դեռ երկրի առաջին դեմքն է մինչեւ 2013-ի աշունը, երբ Վրաստանը վերջնականապես կանցնի խորհրդարանական կառավարման:

Պետության ղեկավարի մերձավոր զինակիցները քննության տակ են: Գլխավոր ուժային նախարարությունը Իվանիշվիլու ձեռքին է: Պաշտպանական գերատեսչության եւ ՆԳՆ նախկին ղեկավար Բաչո Ախալայան բանտախցում է: Դատարանի որոշմամբ պաշտոնանկ է արված զինված ուժերի միացյալ շտաբի պետը: Ընտրություններից առաջ ընդդիմության վրա ճնշումներ գործադրած քաղաքական գործիչներն այժմ մեղադրվում են խոշտանգումների եւ առեւանգումների մեջ:

Սաակաշվիլու հակառակորդների թվում է «Մարտեր առանց կանոնների» մենամարտի գծով աշխարհի կրկնակի չեմպիոն Ահմիրան Բիցաձեն: Նա պնդում է, որ Սաակաշվիլու ցուցումով իրեն խոշտանգել եւ ծեծել են, երկու ամսով բանտ նստեցրել:

ՌԻԱ գործակալությունը հաղորդում է, որ Թբիլիսիի կենտրոնում հայտնվել են վրաններ, որտեղ ստորագրություններ են հավաքում Սաակաշվիլու հրաժարականի պահանջով: Ակտիվիստներից մեկը «Զինվորի հայրը» ֆիլմի հեղինակ Ռեզո Չխեիձեն է:

Սաակաշվիլու հրաժարականը պահանջում են նաեւ նրանք, ովքեր դժգոհ են Ռուսաստանի հետ երկխոսության բացակայությունից: Խորհրդային օկուպացման թանգարանի մոտ ցուցարարները պահանջում են փակել ցուցադրությունը:

Գինեգործներն ուզում են վերադառնալ Ռուսաստանի շուկա. նրանք նույնպես դժգոհ են նախագահից: Մարդիկ փորձում են գուշակել, թե Վրաստանում երբ կավարտվի ներկայիս երկիշխանությունը: Նոր վարչապետ Իվանիշվիլին գտնում է, որ նախագահական պալատի պահպանման ծախսերը չափազանց մեծ են:

Սաակաշվիլին չի շտապում տեղափոխվել, բայց պալատի լուսավորությունն արդեն մասամբ անջատված է: Երեկոյան շենքում լույս է երեւում միայն մի քանի լուսամուտներից: Թբիլիսիում դա համարում են յուրատեսակ նախանշան:

Գերմանական ոչխար, որն իրեն շուն է համարում

Գերմանացի ագարակատեր Վոլֆգանգ Ֆրենսենսը արտակարգ հոգատար հովիվ է: Երբ նրա ոչխարներից մեկը սատկեց, նա սկսեց խնամել նրա ընդամենը 6 շաբաթական գառնուկին: The Huffington Post թերթը պատմում է, որ գերմանացի հովիվը գառնուկին պահել-մեծացրել է իր տանը: Երեք ավստրալական հովվաշների հետ կողք-կողքի մեծացած գառն այժմ դարձել է ոչխար, այն իրեն շուն է համարում, հաճույքով խաղում է «ցեղակից» շների հետ եւ զբոսնում է վզափոկը վզին:

Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի 90-ամյա հոբելյանի առթիվ միջոցառումներ կազմակերպվել են ամբողջ տարվա ընթացքում, սակայն գլխավոր միջոցառումները նոյեմբերի 19-ին էին: Երեկ Մանկավարժական համալսարանում նաեւ բացվեց թանգարան, որտեղ ցուցադրվող լուսանկարների, գրքերի, ամսագրերի ու տեղադրված երեք էկրանների միջոցով այցելուներին ներկայացվում է Մանկավարժական համալսարանի սկզբնավորման պատմությունը, գործունեությունը, նրա 10 ֆակուլտետների առօրյան եւ այլն:

Նորաստեղծ թանգարանը միտված է դառնալու կրթական կենտրոն

«Մանկավարժական համալսարանի 90-ամյա պատմությունը մեր ժողովրդի ու մեր պետության պատմությունն է եւ լավագույն հաստատումը մանկավարժական գիտության ու մտքի», թանգարանի բացման ժամանակ նշեց Մանկավարժական համալսարանի ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ռուբեն Միրզախանյանը**:

Սակայն բուհը դեռ ունի շատ անելիքներ ինչպես մանկավարժական գիտության հետագա զարգացման, այնպես էլ գիտակրթական ոլորտներում: «Այժմ բուհը կանգնած է նոր մարտահրավերների առաջ: Մեր նպատակն է, որ Մանկավարժական համալսարանը համապատասխանի միջազգային ցուցանիշներին, եւ այդ խնդիրը առաջիկա 6-7 տարիներին կլուծվի, քանզի այս հարցում մենք վստահում ենք մեր դասախոսական կազմին եւ ուսանողությանը», ավելացրեց Ռուբեն Միրզախանյանը:

Համալսարանի հոբելյանի ու թանգարանի բացման միջոցառմանը ներկա էին նաեւ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Անրի Ռենոն, Միացյալ Նահանգների Հարավային Կոնեկտիկուտի պետական համալսարանի նախագահ, մեր հայրենակից Մարի Փափազյանը, Ուկրաինայի Դրագոմանովի ազգային մանկավարժական համալսարանի ռեկտորը, Եվրոպայի մանկավարժական համալսարանների ռեկտորների ասոցիացիայի նախագահ Վիկտոր Անդրուշչենկոն եւ միջազգային բուհական համակարգում հայտնի այլ անձինք, նաեւ Ֆրանսիական Լորենի համալսարանի ու Մոսկվայի քաղաքային մանկավարժական համալսարանի պատվիրակությունները:

Ներկաներին բուհի հոբելյանի առիթով շնորհավորելուց հետո մշակույթի նախարարը կարծիք հայտնեց, որ միջոցառումը նվիրված է նաեւ լուսավորության, կրթության ու գիտելիքի մեծարմանը, իսկ ինչ վերաբերում է թանգարանին, ապա, ըստ նախարարի, թեկուզ միայն փաստը, որ բուհի ներսում թանգարան է բացվում, արդեն ուրախալի է: «Ի վերջո, ժամանակի ընթացքում ստեղծված մշակութային նշանակության առարկաներն իրենց տեղը պետք է գտնեն թանգարաններում», հավելեց նախարարը: Իսկ Մանկավարժական համալսարանի թանգարանում ցուցադրված են բուհի պատմության, մեր մշակութային վավերագրությանը մաս կազմող նմուշներ: Ժամանակ առ ժամանակ ցուցադրությունը թարմացվելու է. տրամաբանական է՝ բուհը իր 90-ամյա պատմությունից ցուցադրելու շատ բան ունի:

Հասմիկ Պողոսյանը երեկ նաեւ պատվոգրեր հանձնեց բուհի մշակութային 8 գործիչների կրթության, մասնավորապես մշակութային կրթության մեջ ունեցած ավանդի համար: Մշակույթի նախարարության պատվոգրերով պարգեւատրվեցին ժողովրդական նվագարանների ամբիոնի պրոֆեսոր Կառլեն Թոփչյանը, Կուլտուրայի ֆակուլտետի դեկան Գեւորգ Թադեւոսյանը, կերպարվեստի ամբիոնի վարիչ Լեմս Ներսիսյանը, ռուս եւ արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ Ռուզան Թադեւոսյանը, Մշակույթի կենտրոնի ղեկավար Արկադի Շեկունցը, գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան Սարգիս Էլբակյանը եւ ռեժիսուրայի ամբիոնի պրոֆեսորներ Ալեքսանդր Քոչարյանն ու Արտյուշա Հովհաննիսյանը:

Պատվոգրերը հանձնելուց հետո ներկաները արդեն կարող էին շրջել բուհի թանգարանում, որտեղ 3D ֆորմատային լուծումների միջոցով այցելուների առջեւ երեւում է Խ. Աբովյանին ներկայացնող դերասանը՝ հղելով այցելուներին կրթության ու գիտության մասին իր ուղերձը:

Թանգարանի սրահներում ամփոփված է բուհի պատմության ժամանակագրությունը սկսած հիմնադրման թվականից մինչ մեր օրերը: Բուհի մի սրահում էլ լուսանկարները ներկայացնում են բուհի մասնակցությունը Հայրենական ու Արցախյան պատերազմներում:

Շնորհիվ այս թանգարանի ուսանողները, ինչու ոչ՝ նաեւ դիմորդները կծանոթանան բուհի պատմությանը, որը նաեւ կուղղորդի նրանց մասնագիտական կողմնորոշման հարցում:

Մանկավարժական համալսարանի թանգարանի տնօրեն Ալվարդ Գրիգորյանը նշում է՝ թանգարան բացելու կարիքը կար շուտվանից, օրինակ դիմորդները, որոնք գալիս են ընդունվելու այստեղ, պետք է նախորդ իմանան՝ ինչ ճանապարհ է անցել Մանկավարժական համալսարանը: «Բացի դրանից՝ թանգարանը կրթական հաստատություն է, նախատեսում ենք իրականացնել կրթական ծրագրեր տարիքային ու մասնագիտական տարբեր խմբերի համար, այսինքն՝ մեր թանգարանը ծառայելու է ոչ միայն ճանաչողական նպատակին», ավելացրեց թանգարանի տնօրենը:

Թանգարանի մուտքն ազատ է բոլորի առջեւ, սակայն տարածքի սղության պատճառով ցուցադրված չեն հավաքված բոլոր նմուշները:

Արտասահմանից բուհ այցելած հյուրերը նույնպես տպավորված էին Մանկավարժական համալսարանի տարիների գործունեությունից ու ներկայացված այն փաստերից, որ Մանկավարժական համալսարանն ունի մեծ ավանդ հայկական կրթության ու գիտության բնագավառում:

Իսկ Մանկավարժական համալսարանի հետ համագործակցության վերաբերյալ ԱՄՆ Հարավային Կոնեկտիկուտի պետական համալսարանի նախագահ Մարի Փափազյանը ավելացրեց, որ համագործակցելու գաղափարը հարկ է կյանքի կոչել:

«Ուրախ կլինենք այստեղ բերելու մեր ուսանողներին, իսկ հայ ուսանողներին էլ ընդունելու Կոնեկտիկուտի համալսարանում, որպեսզի երկու բուհերի ուսանողները կարողանան ծանոթանալ մեկը մյուսին, երկու երկրների մշակույթին ու կրթական առանձնահատկություններին», նշեց տիկին Փափազյանը:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԲԵՄ

Թատրոնը իմ կյանքի ճիշտ կեսն է

Գուժ Մանուկյան: Ծնվել է արվեստագետների ընտանիքում: Հայրը՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, դրամատուրգ Ալեքսանդր Արաքսմանյան, մայրը՝ ՀՀ վաստակավոր արտիստ, ԵՊՀԹ-ի դերասանուհի: Դեռ փոքրուց ներծծվել է մշակույթով, բայց երբեք չի պատկերացրել, որ մի օր դերասան կդառնա: Անգամ երբ դպրոցական տարիներին նրան դասընկերները դերասան էին կոչում սլացիկ հասակի եւ գեղեցիկ արտաքինի համար, ինչ-որ տեղ վիրավորվում էր. «Ես դրա մեջ վարկաբեկիչ բան էի տեսնում եւ շատ նեղվում էի», պատմում է **«Ազգին»** ժողովրդական արտիստ, պետական մրցանակի դափնեկիր, «Մովսես Խորենացի» շքանշանի ասպետ **Գուժ Մանուկյանը**:

Արդեն 55 տարի հայկական տարբեր բեմերում՝ Կապանի Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոն, այնուհետեւ Պատանի հանդիսատեսի, իսկ 1966-ից առ այսօր՝ Երեւանի քաղաքաթատրոնի Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն: Դրամատիզմով հագեցած կերպարների յուրօրինակ մատուցմամբ, ռեժիսորական նորամուծություններով օժտված բեմադրիչ-դերասան Գուժ Մանուկյանը մշտապես վայելել է թատերասերների սերն ու համակրանքը, ոմանց համար դարձել կուռք:

Գուժը շատ խստապահանջ արվեստագետ է ու հրաշալի խաղընկեր: Նրա բոլոր խաղընկերները փաստում են, որ Գուժից շատ կարեւոր հատկանիշներ են սովորել, դերասանական արվեստի գաղտնիքներ՝ հատկապես կերպարները ճիշտ մեկնաբանելու գործում:

Դպրոցն ավարտելուց հետո դասընկերոջ հետ ընդունելության քննություններ է հանձնում Երեւանի Գյուղատնտեսական ինստիտուտի ագրոնոմիական ֆակուլտետի համար: «Չընդունվեցի՝ հուրախություն ծնողներիս եւ ապագա հանդիսատեսիս», ասում է Գուժը: Երբ ընտանիքի անդամների հորդորով որոշում է ընդունվել Երեւանի թատերական ինստիտուտ, հայրը՝ Ալեք. Արմենիկը այդ մասին տեղեկացնում է այդ տարի դերասանական կուրս հավաքող, իր մտերիմ ընկեր, ռեժիսոր Վարդան Աճեմյանին: Վերջինս խորհուրդ չի տալիս, որ ընկերոջ տղային ընդգրկի իր կուրսում, պատճառաբանելով, որ կուրսն արդեն համալրվել է շնորհալի երիտասարդներով եւ պետք չէ, միտք էլ չունի, որ միջակ դերասան դառնա իր լավագույն ընկերոջ տղան:

Երբ այս խոսակցությունը Գուժի ականջին է հասնում, խիստ վիրավորվում է եւ որոշում է ամեն գնով «վրեժխնդիր» լինել ապագա իր մեծ ուսուցչին: Տարիները ապացուցեցին, որ քննաջան աշխատանքի, նվիրվածության շնորհիվ կարելի է հասնել հաջողությունների, իհարկե եթե կան նախադրյալներ: Մի առիթով, ռուս հայտնի դրամատուրգ Ալ. Արբուզովը Գուժ Մանուկյանի դերակատարումները դիտելուց հետո բնութագրել է նրան այսպես. «Այդ դերասանի մոտ հրաշալի զուգորդվում են գեղեցկությունը, առնականությունն ու տաղանդը»: Եվ ահա Գուժ Մանուկյանը անմնացորդ կես դարից ավելի ծառայում է նորին մեծություն Թատրոնին, մշտապես իր հանդիսատեսին պարգեւելով նոր ու հետաքրքրական ներկայացումներ ու դերեր:

«Ազգի» հարցին, թե թատրոնը իր կյանքում ինչ տեղ է զբաղեցնում, դերասանն ասում է. «Երբ կես դարից ավելի նվիրվել եմ թատրոնին, միթե դա պարզ չէ, որ թատրոնը իմ կյանքի կեսն է»: Դժվար է առանձնացնել մի քանի հայտնի դերակատարումներից որեւէ մեկը, քանզի ե՛ւ թատրոնում, ե՛ւ կի-

նոյում, ե՛ւ հեռուստաթատրոնում Գուժ Մանուկյանի կերտած դերերը մշտապես համարվել են լավագույնները: «Ինձ համար բոլոր իմ դերերը հոգեհարազատ են եղել: Իսկ որոնք չեմ հավանել, չեմ խաղացել, անկախ նրանից՝ դրանք գլխավոր դեր էին, թե՞ երկրորդական», պատմում է 75-ամյակը բոլորած սիրված արվեստագետը «**Ազգին**»:

Գուժ Մանուկյանի շուրջ երեք տասնյակ կինոդերակատարումները այսօր ընդգրկվել են հայ եւ ռուս կինոյի ոսկե ֆոնդում: Սակայն բեմադրիչ-դերասանի համար թատրոնը մշտապես եղել է գլխավորը եւ անփոխարինելի, եւ առ այսօր էլ նա շարունակում է իր անմնացորդ նվիրումով աշխատանքը, միաժամանակ կրթելով երիտասարդ սերնդին: Գուժ Մանուկյան արվեստագետի ստեղծագործական ուղուն բազմիցս անդրադարձել ենք, իսկ այս մեկը մեր նվիրումն է սիրված դերասանի 75-ամյակին:

Հոբելյանական երեկոն տեղի կունենա Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում նոյեմբերի 23-ին, ժամը 19-ին:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Մեկնարկում է «Չուխաջյան ֆեստը»

Մեկնարկում է հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնը, որն այս տարի անցկացվում է նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Այս տարի փառատոնը կկոչվի «Չուխաջյան ֆեստ» եւ նվիրված է Տիգրան Չուխաջյանի 175-ամյակին, ինչպես նաեւ Հայաստանի կոմպոզիտորների եւ երաժշտագետների միության 80-ամյակին:

Այսօր տեղի կունենա փառատոնին նվիրված մամուլի ասուլիսը, որին ներկա կլինեն մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, Հայաստանի կոմպոզիտորների եւ երաժշտագետների միության նախագահ Ռոբերտ Ամիրխանյանը, Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանը, ինչպես նաեւ Ալ. Սպենդիարյանի անվ. օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի երաժշտական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Կարեն Դուրգարյանը:

Փառատոնն անցկացվում է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի բարձր հովանու ներքո:

Մ. Հ.

Գաբուզյանն ու Սարգսյանն աշխարհի փոխչեմպիոններ

Ամերիկաբնակ Սամուել Սեյյանն ուժեղագույնն է 12 տարեկանների մրցաշարում

Հովհաննես Գաբուզյան

Սլովենիայի Մարիբոր քաղաքում ավարտվեց շախմատի աշխարհի պատանեկան առաջնությունը, որն անցկացվեց տարիքային 6 խմբով: Հայաստանցի 16 շախմատիստներից առավել հաջող հանդես եկան Շանթ Սարգսյանն ու Հովհաննես Գաբուզյանը, որոնք դարձան աշխարհի փոխչեմպիոններ:

Շանթ Սարգսյանը մինչեւ 10 տարեկանների մրցաշարում 11 հնարավորից վաստակեց 9 միավոր եւ գրավեց 2-րդ տեղը: Վերջին 3 տուրերում հայ պատանին հաղթեց սերբ Վելիմիր Իվիչին եւ ուկրաինացի Վիկտոր Մատվիշենին, իսկ ադրբեջանցի Աբդուլա Գադիմբայլիի հետ պարտիան ավարտեց ոչ-ոքի:

Տարիքային այս խմբում մրցակցությունից դուրս էր վիետնամցի ՖԻԴԵ-ի վարպետ Ան Նգուենը, որը ցույց տվեց բացարձակ լավագույն արդյունքը՝ հաղթելով բոլոր 11 պարտիաներում:

Հայաստանի մյուս ներկայացուցիչը՝ Արթուր Դավթյանը եւս հաջող խաղաց: Նա 8 միավորով գրավեց 12-րդ տեղը: Վերջնագծում Արթուրը 3 անընդմեջ հաղթանակ տոնեց Ֆելիխ Բլոխբերգերի, Յինգ Տանի եւ Տունգ Նգուենի նկատմամբ:

Հայաստանին 2-րդ արծաթե մեդալը պարգեւեց մինչեւ 18 տարեկանների մրցաշարի մասնակից Հովհաննես Գաբուզյանը: Նա 11 հնարավորից վաստակեց 8,5 միավոր: Գաբուզյանն ընդամենը կես միավոր զիջեց աշխարհի չեմպիոնի տիտղոսը նվաճած լեհ Դարիուշ Շվարցին: Գաբուզյանն էլ շատ հաջող անցկացրեց վերջնագիծը՝ տոնելով 3 անընդմեջ հաղթանակ Ջժոու Յանգի, Իվան Բուկավշինի եւ Պոուա Իդանիի նկատմամբ: Գաբուզյանը մրցաշարում ընդամենը մեկ պարտություն կրեց՝ 8-րդ տուրում զիջելով ռուսաստանցի Վլադիմիր Ֆեդոսեեւին: Հենց այդ պարտությունն էլ ճակատագրական եղավ հայ շախմատիստի համար՝ զրկելով նրան չեմպիոն դառնալու հնարավորությունից: Նշենք, որ չեմպիոնի տիտղոսը նվաճած Դարիուշ Շվարցի հետ Գաբուզյանը 6-րդ տուրում ոչ-ոքի էր խաղացել:

Սամուել Սեյյան

Տարիքային այս խմբում Հայաստանի 2-րդ ներկայացուցիչը՝ Կարեն Գրիգորյանը 7,5 միավորով գրավեց 12-րդ տեղը: Նրա համար էլ ճակատագրական եղավ 10-րդ տուրում լեհ Կրժիժտոֆ Դուդայից կրած միակ պարտությունը: Այլապես Կարենն էլ կարող էր մրցանակակիր դառնալ:

Մինչեւ 12 տարեկանների մրցաշարում գերազանց հանդես եկավ ԱՄՆ-ում բնակվող Սամուել Սեյյանը՝ նվաճելով աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Հայ պատանին 11 հնարավորից վաստակեց 9 միավոր եւ լրացուցիչ գործակիցներով գերազանցելով Կամերոն Վելերին, 3ի Ջժուին եւ Սավելի Գոլուբովին, արժանացավ ոսկե մեդալի: Ընդ որում վերջին 3 տուրերում նա հաղթեց Հայկ Մարտիրոսյանին ու Կամերոն Վելերին, իսկ ավարտական տուրում հաշտություն կնքեց Սավելի Գոլուբովի հետ:

Տարիքային այս խմբում ՖԻԴԵ-ի վարպետ Հայկ Մարտիրոսյանը 7 միավորով 26-րդն էր, իսկ Արթուր Հողմրյանը 6 միավորով գրավեց 79-րդ տեղը:

Մրցանակային տեղին մոտ էր Մանուել Պետրոսյանը, որը մինչեւ 14 տարեկանների մրցաշարում 8,5 միավորով գրավեց 5-րդ տեղը: Նա միայն լրացուցիչ գործակիցներով զիջեց 3-րդ տեղը գրաված կանադացի Ռիչարդ Վանգին, որը նույնքիսի արդյունքի էր հասել: Ավարտական տուրում Մանուելը հաղթեց Ռուսաստանը ներկայացնող Դավիթ Պառավյանին: Չեմպիոն հռչակվեց ԱՄՆ-ի ներկայացուցիչ Կայդեն Տրոֆը, որը վաստակեց 9 միավոր եւ լրացուցիչ գործակիցներով առաջ անցավ նույնքիսի ցուցանիշ ունեցող հնդիկ շախմատիստ Չիթամբարամ Արավինդից:

Մինչեւ 16 տարեկանների մրցաշարում էլ Տիգրան Հարությունյանը միայն լրացուցիչ գործակիցներով բրոնզե մեդալը զիջեց ռուսաստանցի Մախիմ Չիգաեւին: 2 շախմատիստներն էլ վաստակեցին 8-ական միավոր: Ընդ որում Տիգրանը հայաստանցի 16 շախմատիստներից միակն էր, որ մրցաշարում չպարտվեց: Ավարտական տուրում նա սեւերով խաղում էր առաջատար՝ ռուսաստանցի Ուրի Ելիսեեւի հետ: Հաղթելու դեպքում Տիգրանը մրցանակակիր կդառնար: Սակայն գրանցվեց ոչ-ոքի: Ելիսեեւը 9 միավորով նվաճեց աշխարհի չեմպիոնի տիտղոսը:

Հայ շախմատիստուհիներից առավել հաջողը Սուսաննա Գաբոյանի (մինչեւ 16 տ.) եւ Մարիա Գեւորգյանի (մինչեւ 18 տ.) ելույթն էր, որոնք 7-ական միավորով տարիքային իրենց խմբերում գրավեցին 15-րդ տեղը:

«Շիրակն» ամրապնդեց առաջատարի դիրքը

Ֆուտբոլի Հայաստանի առաջնության 30-րդ տուրից հետո Գյումրիի «Շիրակն» ամրապնդեց առաջատարի դիրքը: «Շիրակն» Աբովյանում հյուրընկալվելով «Արարատին», հաղթեց Լամին Լի Յորոյի խփած միակ գոլի շնորհիվ: Իսկ ահա արարատցիներին այս պարտությունը շատ թանկ արժեցավ: Թիմը կրկին հայտնվեց աղյուսակի վերջին հորիզոնականում, որը մինչ այդ զբաղեցնում էր «Բանանցը»: Վերջինս սեփական հարկի տակ 2-0 հաշվով հաղթեց «Փյունիկին»: Առաջին խաղակեսի ավարտին Գեւորգ Կարապետյանը բացեց հաշիվը, իսկ ընդմիջումից հետո աչքի ընկավ Արարատ Առաքելյանը:

Մեծ հետաքրքրությամբ էր սպասվում առաջատար եռյակում գտնվող «Իմպուլսի» եւ «Միկայի» հանդիպումը: Այն շատ հաջող սկսվեց «Միկայի» համար, որը 2-րդ րոպեին Նարեկ Բեգլարյանի հարվածի շնորհիվ բացեց հաշիվը: Սակայն «Միկային» վիճակված չէր հաղթանակ տոնել: Առաջին խաղակեսի ավարտին Ռումյան Հովսեփյանը վերականգնեց հավասարակշռությունը: Գրանցվեց ոչ-ոքի՝ 1-1:

«Ուլիսի» եւ «Գանձասարի» մրցավեճում հաշիվն այդպես էլ չբացվեց: «Գանձասարի» դարպասապահ Արսեն Բեգլարյանը վերջին 3 հանդիպումներում դարպասն անառիկ է պահում:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Շիրակ	29	19	5	5	50-28	62
2. Միկա	29	18	5	6	46-31	59
3. Իմպուլս	29	13	6	10	49-45	45
4. Գանձասար	29	12	8	9	32-24	44
5. Փյունիկ	29	13	3	13	48-40	42
6. Ուլիս	30	8	8	14	33-40	32
7. Բանանց	29	4	10	15	30-45	22
8. Արարատ	30	6	3	21	20-55	21

Ռմբարկուներ

Նորայր Գյոզալյան	«Իմպուլս»	18
Անդրանիկ Բարիկյան	«Շիրակ»	12
Ֆոֆանա Բեկո	«Շիրակ»	12
Լամին Լի Յորո	«Շիրակ»	11
Վիուլեն Այվազյան	«Փյունիկ»	10
Սեմյոն Մուրադյան	«Միկա»	10

«Շախտյորի» հաղթարշավն ընդհատվեց

Ուկրաինայի առաջնության 16-րդ տուրում ընդհատվեց Դոնեցկի «Շախտյորի» 15 անընդմեջ հաղթանակների շարքը: Միրչա Լուչեսկուի սաները Կիեւում 0-2 հաշվով պարտվեցին տեղի «Արսենալին»: Հենրիխ Մխիթարյանը մասնակցեց ողջ հանդիպմանը:

Չնայած պարտությանը, «Շախտյորը» 45 միավորով վստահորեն գլխավորում է Ուկրաինայի առաջնության աղյուսակը: Այսօր «Շախտյորը» չեմպիոնների լիգայի մրցաշարի հերթական խաղում Դանիայում կհյուրընկալվի «Նորդսելանին»: Հիշեցնենք, որ առաջին շրջանում սեփական հարկի տակ «Շախտյորը» հաղթել էր Հենրիխ Մխիթարյանի խփած 2 գոլերի շնորհիվ:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Արաս Օզբիլիսի հերթական գոլը

Կրասնոդարի «Կուբանի» կազմում իր արդյունավետ խաղն է շարունակում ՀՀ հավաքականի կիսապաշտպան Արաս Օզբիլիսը, որը դարձել է թիմի առաջատարներից մեկը: Նա «Կուբանում» ստանդարտ իրադարձությունների հիմնական իրացնողն է: Առաջնության 16-րդ տուրում հյուրընկալվելիս «Կուբանը» 3-0 հաշվով հաղթեց «Մորդովիային»:

Հանդիպման 49-րդ րոպեին Արաս Օզբիլիսը հիանալի իրացրեց տուգանային հարվածը՝ խփելով հանդիպման 3-րդ գոլը: Վերջին 3 հանդիպումներում Օզբիլիսը դաշտից չի հեռանում առանց գոլի՝ խփելով մեկական գնդակ: ՌԴ առաջնությունում նա արդեն 6 գոլի հեղինակ է դարձել եւ գտնվում է լավագույն ռմբարկուների շարքում: 10 գնդակով ցուցակը գլխավորում է «Զենիթի» հարձակվող Ալեքսանդր Կերժակովը: Յուրա Մովսիսյանը, որը վնասվածքի պատճառով չի մասնակցում վերջին հանդիպումներին, 9 գոլ է խփել:

Աբրահամը նկարահանվում է Շվայգերի ֆիլմում

WBO-ի վարկածով միջին քաշային կարգում աշխարհի ներկայիս չեմպիոն Արթուր Աբրահամը մարզումներին զուգահեռ ժամանակ է գտնում նկարահանվելու գերմանացի հայտնի դերասան եւ պրոդյուսեր Թիլ Շվայգերի «Հանցանքի վայրը» ֆիլմում: Հայ բռնցքամարտիկն այդ ֆիլմում կավատի դեր է կատարում: Շվայգերը գոհ է Արթուր Աբրահամի դերասանական տաղանդից:

Թիլ Շվայգերն ու Արթուր Աբրահամը վաղուց են միմյանց ճանաչում: Շվայգերը բազմիցս ներկա է գտնվել Աբրահամի մենամարտերին: Իսկ Ռոբերտ Շտիգլիցի հետ մենամարտից հետո, որում Աբրահամը նվաճել էր մրցակցին պատկանող չեմպիոնական գոտին, Շվայգերը Արթուրին առաջարկել էր նկարահանվել իր ֆիլմում, որի շնորհանդեսը կկայանա 2013-ի ապրիլին:

Պետրոսյանն ու Անդրեասյանը միջին դիրքերում են

Արաբական Միացյալ Էմիրությունների Ֆուջեյրա քաղաքում ընթացող շախմատի մրցաշարի 6 տուրից հետո Զավեն Անդրեասյանն ու Տիգրան Պետրոսյանը վաստակել են 3,5-ական միավոր: Նրանք մեկ միավորով են զիջում աղյուսակը գլխավորող Սերգեյ Ֆեդորչուկին, Սուրիա Գանգուլիին, Էթիեն Բաֆրոյին, Ալեքսանդր Մոիսեենկոյին եւ Չանդա Սանդիպանին:

Վերջին 3 տուրերում Անդրեասյանը վաստակեց 1,5 միավոր: Նա ոչ-ոքի խաղաց Նի Հուայի հետ, ապա պարտվեց Բայադուր Զոբավային, իսկ 6-րդ տուրում հաղթեց Ռաջարա Անկիթին: Նույնքիսի արդյունքի հասավ նաեւ Տիգրան Պետրոսյանը: 4-րդ տուրում նա առաջին պարտությունը կրեց Մա Քուինից, ապա ոչ-ոքի խաղաց Մակսաթ Աթաբաեւի հետ ու հաղթեց Յայարամ Ասվինին:

Չեխերը նվաճեցին Դեւիսի գավաթը

Թենիսի Չեխիայի հավաքականը դարձավ Դեւիսի գավաթակիր՝ եզրափակիչում 3-2 հաշվով պարտության մատնելով իսպանացիներին: Վճռորոշ մրցախաղում չեխ Ռադեկ Շտեպանեկը պարտության մատնեց իսպանացի Նիկոլաս Ալմագրոյին (6-4, 7-6, 3-6, 6-3):

Չեխիայի հավաքականն իր պատմության մեջ առաջին անգամ նվաճեց Դեւիսի գավաթը: Չեխ թենիսիստները 32 տարի առաջ էին դարձել պատվավոր մրցանակի դափնեկիրներ: Այն ժամանակ նրանք ներկայացնում էին Չեխոսլովակիան:

Չեմպիոնության հարցը կվճռվի Բրազիլիայում

«Ֆորմուլա-1» դասի ավտոմրցավազքի աշխարհի առաջնության նախավերջին փուլն անցկացվեց ԱՄՆ-ում: Հաջողությունն ուղեկցեց Լուիս Հեմիլտոնին, որը բոլորից արագ հաղթահարեց մրցաշարածությունը:

Սակայն ԱՄՆ-ի Գրան պրիի գլխավոր ինտրիգը չեմպիոնության համար պայքարող Սեբաստիան Ֆետելի եւ Ֆեռնանդո Ալոնսոյի մրցակցությունն էր: Եթե Ֆետելին հաջողվեր Ալոնսոյից 10 միավոր ավելի վաստակել ԱՄՆ-ի Գրան պրիում, ապա ժամկետից շուտ, 3-րդ անգամ կնվաճեր աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Սակայն դա նրան չհաջողվեց: Ֆետելը վերջնագիծը հասել 2-րդը, իսկ 3-րդ արդյունքը ցույց տվեց Ալոնսոն: Այսպիսով, Ֆետելն ընդամենը 3 միավոր ավելի վաստակեց իր գլխավոր մրցակցից:

Նոյեմբերի 25-ին Բրազիլիայում կայանալիք վերջին փուլից առաջ Սեբաստիան Ֆետելն ընդհանուր հաշվարկով վաստակել է 273 միավոր եւ Ալոնսոյից առաջ է անցել 13 միավորով: Ինչ խոսք, 3-րդ անգամ չեմպիոն հռչակվելու Ֆետելի հնարավորությունները գերադասելի են: 3-րդ տեղում 206 միավորով Կիմի Ռայկոնենն է:

Եթե անհատական հաշվարկում չեմպիոնի տիտղոսի հարցը դեռեւս վճռված չէ, ապա թիմային պայքարում ամեն ինչ արդեն պարզ է: 3-րդ տարին անընդմեջ «Կոնստրուկտորների գավաթի» խաղարկության հաղթող դարձավ «Ռեդ Բուլը», որը վաստակեց 440 միավոր: Այս թիմում են հանդես գալիս Սեբաստիան Ֆետելն ու Մարկ Ուեբերը: Իսկ ահա 2-րդ եւ 3-րդ տեղերի հարցը կվճռվի Բրազիլիայում: 367 միավորով 2-րդ տեղում «Ֆերարին» է, «Մակլարենը» հետ է մնում 14 միավորով:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ

Օրվա հետքերով

«Ենի Ազարբայջանն» ու նոր Հայաստանը

Կիրակի օրը Բաքվում մեծ շուրջով տոն էր նշվում. «Ենի Ազարբայջան» իշխանական կուսակցությունը նշում էր իր հիմնադրման 20-ամյակը: Բնականաբար, նախագահ Ալիեւը միջոցառմանը ներկա էր, որտեղ ելույթ է ունեցել՝ մասնավորաբար անվանելով «Ադրբեջանի հիմնական թշնամիներին»:

Ուրեմն այսպես, եթե Ադրբեջանի ռազմական դոկտրինում այդ երկրի թիվ մեկ թշնամի է ճանաչված Իրանը (այս երկիրն էլ «տարածքային նկրտումներ» ունի «ադրբեջանական տարածքի հանդեպ՝ արդեն իսկ «օկուպացրած լինելով ադրբեջանական բնիկ տարածքներ» - Հ. Ա.), ապա նախագահ Ալիեւի հայտարարության համաձայն, Ադրբեջանի թիվ մեկ թշնամին հայկական լոբբին է: Փաստորեն, երկրի նախագահը կամ կուսակից գործընկերներին մոլորեցնում է, կամ պարզապես տեղյակ չէ սեփական երկրի ռազմական դոկտրինից: Ընդ որում՝ Ալիեւը շեշտել է. «Ինքը՝ Հայաստանը, որպես երկիր ոչ մի նշանակություն չունի: Փաստացի դա արտերկրից ղեկավարվող տարածք է, որը արհեստականորեն ստեղծվել է ադրբեջանական հինավուրց հողերի վրա: Մեր հիմնական թշնամին հայկական լոբբին է»: Այստեղ, ավելորդ համարելով պատմական գիտությունների թեկնածուին հերթական անգամ պատմագիտական տեղեկություններ հաղորդելը, խոսենք բոլորովին այլ բանից՝ նոր Հայաստանից:

Նոյեմբերի 27-ին Լիբանանի խորհրդարանում ելույթ կունենա ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը: Բացի նրանից, որ մեծավորարեւելյան լարված իրադրության համապատկերում ՀՀ նախագահի ելույթը խիստ ուշագրավ կարող է լինել ինքնին, այն հատկանշական է նաեւ այն առումով, որ Լիբանանի ընդդիմությունից «Ապագա» խմբակցության ներկայացուցիչ Խալեդ Զահրամանիմ հայտնել է. «Ներկա կլինենք խորհրդարանի նիստին, որպեսզի լսենք ՀՀ նախագահին, այլ ոչ թե քաղաքական քննարկումներին մասնակցելու համար»: Հետեւաբար ՀՀ նախագահի ելույթը Լիբանանում արդեն իսկ լուրջ հետաքրքրություն առաջացրել է, ինչո՞ւ: Նախագահ Սարգսյանը Բեյրութ կմեկնի արձակուրդից հետո, իսկ արձակուրդից առաջ Փարիզում էր, որտեղ նրան հյուրընկալել էր Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը՝ ընդունելով ՀՀ նախագահից եկող տարի պետական այցով Երեւան ժամանելու հրավերը: Այդ հանդիպումից հետո Օլանդը տեղեկացրեց. «ՀՀ նախագահի միջոցով մենք ուղերձներ ենք փոխանցել Իրանին»:

Այս համապատկերում ամենեւին էլ չի բացառվում, ավելին՝ բնական է, որ ՀՀ նախագահի միջոցով Ֆրանսիան (Արեւմուտքը) ուղերձներ փոխանցած լինի նաեւ Սիրիային ու առհասարակ ողջ արաբական Մերձավոր Արեւելքին, ու նոյեմբերի 27-ին նախագահ Սարգսյանը Լիբանանի խորհրդարանում նաեւ այս ուղերձները պետք է փոխանցի, գուցե նաեւ այս պատճառով էլ Լիբանանի ընդդիմությանը հետաքրքրել է Հայաստանի նախագահի ելույթը:

Նկատենք նաեւ, որ վերջերս Երեւան ժամանած ԵՄ այլ երկրի՝ Լատվիայի ԱԳ նախարարը բավական հետաքրքրվածություն ցուցաբերեց «Սիրիայի հետ հարաբերություններում Հայաստանի փորձի հետ կապված: Տրամաբանորեն պարոն նախարարը նկատի է ունեցել Սիրիայում հայերի ունեցած դերն ու նշանակությունը, ինչպես նաեւ սիրիական իշխանության ու ընդդիմության հետ հայկական պետության հարաբերությունները: Ցնորանք նաեւ, որ իսրայելա-պաղեստինյան առկա սրվածության պայմաններում Արաբական Միացյալ Էմիրություններ, այնուհետեւ Քուվեյթ մեկնեց ՀՀ ԱԳ նախարար Նալբանդյանը՝ չի բացառվում, որ արաբ առաջնորդներին որոշ ուղերձներ փոխանցելու: Այս ամենը հիմք է տալիս եզրակացնելու, որ Հայաստանն այսօր Արեւմուտքի համար (ինչու ոչ՝ նաեւ հաշվի առնելով հայ-ռուսական հարաբերությունների «բարձր որակը» - Հ. Ա.) վերածվել է յուրօրինակ «դիվանագիտական փոխանցողի», որը, սակայն, ու ինչը շաս կարեւոր է՝ «աշխատում է լուռ», առանց ավելորդ բարձրաձայնումների:

Հիմա, մեղմ ասած, ծիծաղելի են հնչում Իլհամ Ալիեւի ելույթի հետագա կտորները, օրինակ. «Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ առկա անջրպետը տարեցտարի խորանում է հօգուտ մեզ: Ադրբեջանը ուժեղանում է եւ ամրանում, իսկ Հայաստանը տարեցտարի նահանջում է եւ գլորվում», ասել է Իլհամ Ալիեւը:

Այդուհանդերձ՝ չենք կարող չողջունել հարեւան երկրի ղեկավարի բացառիկ, աննախադեպ անկեղծությունը: Իլհամ Ալիեւը, հայկական լոբբիից հետո ադրբեջանական պետության երկրորդ թշնամի է անվանել «հակամահմեդական կենտրոնների կողմից ուղղորդված հակաադրբեջանական կենտրոններին»: Հիմա՝ ավելի պարզ. մահմեդական աշխարհի առաջնապահ պետություն Իրանը բազմիցս է մեղադրել Ադրբեջանին՝ հենց ու հատկապես վերջինիս հակամահմեդական քաղաքականության» եւ «Իսրայելի հետ ջերմագույն շփումների» համար: Բաքվում ոչ ոք չի կարող ժխտել Թել Ավիվի հետ սերտ բազմաոլորտ հարաբերությունները, իսկ էլ որտե՞ղ կարող են ստեղծվել կամ էլ որտեղի՞ց կարող են սնվել «հակամահմեդական կենտրոնները», եթե ոչ մահմեդական աշխարհի թիվ մեկ թշնամի Իսրայելից: Ցնորանք նաեւ, որ հենց ադրբեջանական բարձրագույն իշխանության եթե ոչ թույլտվությամբ, ապա հաստատ գիտությամբ (որոնք Ադրբեջանում նույնն են) այդ երկրում մզկիթներ են քանդվում, մոլլաներ են սպանվում... հետեւաբար եթե ադրբեջանական պետության թիվ երկու թշնամին «հակամահմեդական կենտրոններն են», ապա Իլհամ Ալիեւն ինքը, ստացվում է, իր երկրի «թիվ երկու թշնամին է», ու այս բացառիկ, աննախադեպ անկեղծությունը պետք է ողջունել:

Եվ վերջում պարզապես չենք կարող չանդրադառնալ Ալիեւի հերթական անսանձությունից ծնված հայտարարություններին. «Մենք վարում ենք բանակցություններ, բայց ավելացնում ենք ու ավելացնելու ենք մեր ռազմական ուժը: Ես չեմ կասկածում, որ մենք կվերականգնենք մեր տարածքային ամբողջականությունը, իսկ ԼՂ հիմնահարցը կարող է լուծվել հենց այս սկզբունքի հիման վրա», հայտարարել է Իլհամ Ալիեւը՝ արժանանալով «Ենի Ազարբայջանի» ողջ պատվիրակների հոտնկայս ծափահարություններին: Ահա այսպիսի Նոր Հայաստան ու «Ենի (նոր) Ազարբայջան»:

ՀՈՎՀԿ ԱՓՅԱՆ

Վրացահայերը՝ սիրիահայերի կողքին

Կիրակի Հայ առաքելական եկեղեցու վիրահայոց թեմի «Հայարտուն» մշակույթի կենտրոնի Գալուստ Գյուլբենկյան սրահում կայացել է ուղիղ միացում Հալեպում գտնվող հայ համայնքի հետ:

Սիրիայի Բերիո թեմի առաջնորդարանի բանբեր Ժիրայր Ռայիսյանը, ներկայացնելով համայնքի գործունեությունը, շեշտել է, որ Սիրիայում սկսված բախումների հետեւանքով խաթարվել է հայի առօրյան: Հալեպում հայ զոհվածների թիվը հասնում է 50-ի. նրանք ոչ միայն զինծառայողներ են, այլեւ կամավորներ եւ պատահական զոհեր: Ռայիսյանը շեշտել է, որ բազմաթիվ սիրիահայեր բռնում են արտագաղթի ճամփան եւ հատկապես հեռանում հարեւան Լիբանան կամ հայրենիք: Այսօր Հայաստանում հաստատվել են 5.000 սիրիահայեր:

Անդրադառնալով Հալեպի Սուրբ Գեւորգ եկեղեցուն, Ռայիսյանը շեշտել է, որ մայր խորանը չի վնասվել եւ վերանորոգման աշխատանքները կսկսվեն, երբ Սիրիայում իրավիճակը կարգավորվի:

Նա շեշտել է, որ սիրիահայերին օժանդակում են բազմաթիվ հայկական կազմակերպություններ, ՀՀ կառավարությունն ու Մայր աթոռ Սուրբ Էջմիածինը: Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանն էլ առաջարկել է դրամահավաք կազմակերպել Սիրիայի հայ համայնքին օգնելու նպատակով:

Ի դեպ, Սիրիայից ժամանած արաբ քույր ու եղբայրը փաստաթղթերի հետ կապված խնդիրներ են ունեցել եւ հայտնվել Թբիլիսիում: Հայ համայնքը նրանց համարել է հարազատ եւ օգնել: Նրանք դեռ Թբիլիսիում են եւ հաճախում են Սուրբ Էջմիածին եկեղեցի:

Հ. Հ.

ԲՈՒԽԱՐԵՍՏ

Հակոբ Սիրունին հետմահու ընտրվեց ռումինական ակադեմիայի անդամ



Ռումինական ակադեմիան նոյեմբերի 15-ի իր ընդհանուր ժողովում Ակադեմիայի հետմահու անդամի կոչում շնորհեց նշանավոր պատմաբան, արեւելագետ եւ հայագետ Հակոբ Սիրունուն:

Երիտասարդ տարիներին Կ. Պոլսի գրական-հասարակական կյանքի խոստումնալից գործիչ, Դանիել Վարուժանի հետ «Նավասարդ» տարեգրքի համահրատարակիչ Հակոբ Ջոլոյան Սիրունին (1890-1973թթ.), փրկվելով եղեռնից, 1922թ. ի վեր ապաստանում է Ռումինիայում, ուր նշանավոր ռումին պատմաբան Նիկոլաե Յորգայի հովանավորությամբ ծավալում է գիտական-ստեղծագործական լայն գործունեություն՝ այդ երկրում սկիզբ դնելով արեւելագիտության եւ հայագիտության ճյուղերին: Բազմակողմանի հետաքրքրությունների տեր գործիչը Երկրորդ համաշխարհային պատերազմից անմիջապես հետո, մեղադրվելով ազգայնական գաղափարների համար, 1945թ. ախտորվում է Սիբիր, որտեղից տասը տարի հետո վերադառնալով Ռումինիա, կրկին նվիրվում է գիտությանը եւ հասարակական գործունեությանը:

Դեսպան Համլետ Գասպարյանի կարծիքով, վերջին հետազոտությունները, ինչպես նաեւ Հակոբ Սիրունու թողած գիտական ժառանգության ու հարուստ արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունը կնպաստեն Ռումինիայում հայագիտության վերածննդին, որի հիմնադիրներից է եղել նշանավոր գիտնականը:

Մեկուկեսդարյա պատմություն ունեցող ռումինական ակադեմիայի անդամ են եղել մի շարք ռումինահայեր, որոնց մեջ՝ գրականագետ եւ տեսաբան Կարապետ Իբրահիլեանուն (1871-1936), տնտեսագիտական մտքի մեծերից Վիրջիլ Մաջարուն (1887-1940), մեծ մտածող, մաթեմատիկոս, կրթական համակարգի բարեփոխիչ Սպիրու Հարեթը (1851-1912), աշխարհահռչակ գերոնտոլոգ Աննա Ասլանը (1897-1988):

Երեւանի քաղաքապետարանի «Երեւանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի իրականացման մասնագետների խմբում ծրագրի ղեկավարի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Մրցույթին մասնակցել ցանկացողները աշխատանքային նկարագրին եւ ներկայացվող մասնագիտական պահանջներին կարող են ծանոթանալ նաեւ Երեւանի քաղաքապետարանի՝ **www.yerevan.am** պաշտոնական կայքում:

Հայտերը պետք է ուղարկվեն ashkhatakazm@yerevan.am էլեկտրոնային հասցեին՝ առարկայի տողում (subject line) նշելով պաշտոնի անվանումը:

Բոլոր հայտերը պետք է ներկայացվեն հայերեն եւ անգլերեն լեզուներով՝ Adobe PDF ֆորմատով մինչեւ 2012թ. նոյեմբերի 23–ը, ժամը18.00-ն

Սահմանված ժամկետից ուշ ստացված հայտերը չեն դիտարկվի:

Հայտերը պետք է պարունակեն հետեւյալ փաստաթղթերը՝

1. Ուղեկցող նամակ (առավելագույնը 1 էջ)
2. Ինքնակենսագրություն (Resume կամ CV)
3. Երկու երաշխավորողների անունները եւ կոնտակտային տվյալները:

«Երեւանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ

"Investing Projects Implementation Unit Building up of Yerevan" Community Non-Profit organization of the Municipality of Yerevan announces tender for vacancy of Project Manager's position in the professional group for the implementation of urban sustainable development investment program.

Those, who are interested in participating to the tender, also can get acquainted to the job description and professional requirements in the official website of the Municipality of Yerevan: **www.yerevan.am**

Please, send the applications to the following e-mail address: ashkhatakazm@yerevan.am and mention the name of the position on the subject line.

All the applications must be submitted in Armenian and English languages, Adobe PDF Format till November 23, 2012, hour: 18.00.

Late applications after the deadline will not be accepted.
The applications must include the following documents:
Supporting letter (maximum 1 page)
Biography (Resume or CV)
Names and contact details of two guarantors.

"Yerevan's Investment Project Implementation Unit"
Community Non-Profit organization

ՕՐԱԿԱՐԳ

2012թ. նոյեմբերի 23-ին՝ ժամը 11:30-ին, ՀՀ ֆինանսների նախարարությունում (Մելիք-Ադամյան 1) կայանալիք վիճակախաղերի, շահումով խաղերի խաղատների լիցենզավորման հանձնաժողովի նիստի

▼ «ՌՈՒՍՏԱՐ» ՍՊԸ կողմից ներկայացված շահումով խաղի կազմակերպման լիցենզիա ստանալու հայտի քննարկում:

▼ «Լենդ-Գեյմ» ՍՊԸ (ՇԽ-230 լիցենզիա), «ԽԱՉՈՒԱՖ» ՍՊԸ (ՇԽ-250 լիցենզիա), «Նիկմիլ 777» ՍՊԸ (ՇԽ-236 լիցենզիա) «Բիգ-Ռամզես» ՍՊԸ (ՇԽ-208 լիցենզիա) նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառելու հարցերի քննարկում:

ՀՀ ֆինանսների նախարարություն

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունեությունը իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 19.11.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: